



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
EUROPEAN UNION FOR ARMENIA

EU4Youth

«EU4Youth - Սոցիալական Ձեռնարկատիրությունը Հայաստանում և
Վրաստանում» ծրագիր

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական Ձեռնարկատիրության մոդելի զարգացման իրավական դաշտի
ձևավորման հնարավորությունների

Իրականացվել է՝ Դիանա Մովսեսյանի և Արմեն Պետրոսյանի կողմից

Երևան, 2021





EU4Youth

Հապավումներ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԶՍ	Զարգացման Սկզբունքներ
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՍԶՀՎ	Սոցիալական Ձեռնարկատիրությունը Հայաստանում և Վրաստանում ծրագիր
ՄՔ	Մերսի Քորփս
ՍԶ	Սոցիալական ձեռնարկատիրություն
ՀՕ	Հարկային Օրենսգիրք
ԱՕ	Աշխատանքային Օրենսգիրք
ՔՕ	Քաղաքացիական Օրենսգիրք





EU4Youth

Օտարալեզու եզրույթների հայերեն տարբերակները

EU (European Union)

ԵՄ (Եվրոպական Միություն)

DP (Development Principles NGO)

ԶՍ (Զարգացման Սկզբունքներ ՀԿ)

SEAG project

ՍՁՀՎ ծրագիր

(Սոցիալական Ձեռնարկատիրությունը Հայաստանում և

(Social Entrepreneurship in Armenia & Georgia)

Վրաստանում)

ՄՔ (Մերսի Բորփս)

MC (Mercy Corps)





EU4Youth

Բովանդակություն

1. Հակիրճ ամփոփում

2. Մաս 1. Ներածություն

2.1. ՍՁ հասկացություն, ընդհանուր նկարագիր, ներկայիս իրավիճակը ՀՀ-ում

2.2. Օրենսդրական ուսումնասիրություն

2.2.1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք

2.2.2. Ոչ առևտրային կազմակերպություններ

2.2.2.1. Հասարակական միավորումներ

2.2.2.2. Հիմնադրամ

2.2.2.3. Կոոպերատիվ

2.2.2.4. Հասարակական կազմակերպություններ:

2.2.3. Առևտրային կազմակերպություններ .

2.2.3.1. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ,
բաժնետիրական ընկերություններ

2.2.3.2. Անհատ ձեռնարկատերեր

2.2.4. «Բարեգործության մասին» ՀՀ (այսուհետ Բարեգործության մասին օրենք)

2.2.5. ՀՀ Աշխատանքային օրենսգիրք

2.2.6. ՀՀ Հարկային օրենսգիրք

2.2.7. «Գովազդի մասին» ՀՀ օրենք (այսուհետ Գովազդի մասին օրենք):





EU4Youth

2.2.8. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք (այսուհետ՝ Տեղական ինքնակառավարման մասին օրենք):

3. Մաս II

- 3.1. Հայեցակարգի վերանայում
- 3.2. Առաջարկներ, փոփոխություններ

4. Մաս III

- 4.1. Առաջարկներ այսօր ՍԶ դաշտում գործող բիզնեսի և էկոհամակարգի արդյունավետ զարգացման համար. Իրավական ակնարկ, ՍԶ և էկոհամակարգի զարգացման հարկային և իրավական կողմերը:
- 4.2. ՍԶ-ների ստեղծման գործընթացի վերաբերյալ անցկացված ֆոկուս խմբային և խորհրդատվական բնույթի հանդիպումների արձանագրություններ:
- 4.3. ՍԶ ֆինանսավորման վերաբերյալ ընդհանուր նկատառումներ (soft փոխառություններ և այլն), ֆինանսական բաղադրիչներ:

5. Եզրափակիչ դրույթներ

Աղյուսակ Ա. ՀՀ-ում ամենատարածված կազմակերպատիրավական ձևերը, նկարագրությունը, մանրամասները:

Աղյուսակ Բ. ՀՀ-ում կիրառելի հարկման համակարգերը ձևերը, նկարագրությունը և մանրամասները:





EU4Youth

1. Հակիրճ ամփոփում

Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող EU4Youth նախաձեռնության շրջանակներում հայկական «Զարգացման Սկզբունքներ» ՀԿ-ը՝ համագործակցելով Mercy Corps միջազգային կազմակերպության և վրացական «Բիզնես խորհրդատվական կազմակերպությունների ասոցիացիա» (ABCO)–ի հետ, Սոցիալական Ձեռնարկատիրությունը Հայաստանում և Վրաստանում (SEAG) ծրագրերի հետ, իրականացրել է սույն ուսումնասիրությունը նպատակ ունենալով ներգրավել երիտասարդությանը սոցիալական ձեռնարկատիրության միջոցով սոցիալական փոփոխություններ նախաձեռնելուն:

Սույն փաստաթղթի մեթոդաբանությունը ներառել է ՍՁ-ների միջազգային փորձի, ՀՀ գործող օրենսդրական դաշտի վերլուծություն, «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ» ՀՀ կառավարության որոշման նախագծի ուսումնասիրություն, որոշակի ֆոկուս խմբային և խորհրդատվական բնույթի հանդիպումների անցկացում:





EU4Youth

Հիմնական կետեր .

Չնայած վերջին տարիների ՍՁ թվի աճին, այնուամենայնիվ բացակայում է ՍՁ միասնական ու համապարփակ սահմանում, որը կարտացոլի Հայաստանում գործող ՍՁ կարգավիճակը: Մինչ օրս ՍՁ շփոթվում է բարեգործության, երբեմն նաև կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հետ: Ու թեև փորձագետների մեծ մասի կարծիքով, այսօր կարիք չկա մշակելու ՍՁ-ների համար հատուկ օրենսդրություն, այնուամենայնիվ, նույն փորձագետների կարծիքով, անհրաժեշտ է մշակել ՍՁ կոնցեպտի աշխատանքային կարգավորում՝ հիմնական չափորոշիչներով և կարևոր առանձնահատկություններով, ինչն թույլ կտա պետությանն ու հիմնական շահառուներին տարբերակել և ճիշտ մոտենալ նմանատիպ կազմակերպություններին:

Այդ նպատակով, մասնագետների կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԵՌՆԱԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որի նպատակն է սահմանել ՍՁ զբաղվող կազմակերպությունները, չափորոշիչներ, որոնց միջոցով հնարավոր կլինի տարբերակել դրանց և ըստ այդմ, տալ աշխատանքային կարգավորում, որը ուսումնասիրվել է մասնագետների կողմից սույն փաստաթղթի շրջանակներում, տալով համապատասխան առաջարկներ և նկատողություններ: Ուսումնասիրության ամբողջականությունն ապահովելու համար առանձին ակնարկ է կատարվել հարկային ոլորտի առանձնահատկություններին, համապատասխան առաջարկներով:

Համաձայն փորձագետների, Հայաստանում այսօր գործում են շուրջ 100 ՓՄՁ-ներ, որոնցից ոչ մեկի կազմակերպաիրավական ձևը ճշգրիտ չի արտացոլում իրենց բնույթը, ինչն իր հերթին լրացուցիչ ապացուցում է ՍՁ ոլորտի կարգավորման և զարգացման անհրաժեշտությունը: Այս կազմակերպությունները մեծամասամբ միջինում 3-5 տարեկան են, հիմնականում գոյատևում են դոնոր





EU4Youth

կազմակերպությունների կողմից տրամադրվող աջակցության հաշվին, քանի որ սեփական գործունեության միջոցով ֆինանսական եկամուտ ապահովելու հնարավորություն ունենալու համար բացակայում են ֆինանսական կազմակերպությունների կողմից սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվող կազմակերպությունների համար հատուկ մշակված ֆինանսական պրոդուկտը կամ ծառայությունը:

Ինչ վերաբերում է կրթական համակարգին, դրանում երիտասարդությանը և կանանց ներգրվելուն, ապա այստեղ ևս բավական շատ անելիք կա, սկսած ձեռնարկատիրական կրթության խթանումից, ՄՁ էկոհամակարգի զարգացումից, մինչև իրավական կրթությունը բարձրացնելու նպատակով դասընթացների և վարպետաց դասերի և նմանատիպ այլ միջոցառումների անցկացումը:





EU4Youth

2. Մաս 1. Ներածություն

Սույն ուսումնասիրությունը իրականացվել է Ջարգացման Սկզբունքներ ՀԿ-ի «Սոցիալական Ձեռնարկատիրությունը Հայաստանում և Վրաստանում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող EU4Youth նախաձեռնության շրջանակներում հայկական «Ջարգացման Սկզբունքներ» ՀԿ-ը՝ համագործակցելով Mercy Corps միջազգային կազմակերպության և վրացական «Բիզնես խորհրդատվական կազմակերպությունների ասոցիացիա» (ABCO)–ի հետ, Սոցիալական Ձեռնարկատիրությունը Հայաստանում և Վրաստանում (SEAG) ծրագրի շրջանակներում նպատակ ունի սոցիալական ձեռնարկատիրության միջոցով ներգրավել երիտասարդությանը սոցիալական փոփոխություններ նախաձեռնելուն:

Ծրագրի տևողությունը Հայաստանում 28 ամիս է, 2020թ. փետրվարի 6 -ից մինչև 2022 թ. հունիսի 6-ը:

Ծրագրի նպատակն է Հայաստանում և Վրաստանում սոցիալական ձեռներեցության ոլորտում երիտասարդության (18-35 տարեկան) ձեռնարկատիրական ներուժի ամրապնդումը՝ նվազեցնելով անհավասարությունը, նպաստելով երիտասարդության միավորմանը և ներգրավմանը:

Ծրագրի գլխավոր նպատակն է՝ և՛ Հայաստանում, և՛ Վրաստանում ներգրավել երիտասարդների առավել խոցելի խմբերին և, մասնավորապես, այն ձեռնարկություններին, որոնք աշխատում են լուծել ամենակարևոր սոցիալական և բնապահպանական խնդիրները, հասնելու համար 3 հիմնական արդյունքի:

- Երիտասարդ սոցիալական ձեռնարկատերերի հմտությունների կատարելագործում, թարմ գիտելիքների և հնարավորությունների ձեռքբերում սոցիալական ձեռնարկատիրության ոլորտում:





EU4Youth

• Երիտասարդների սոցիալական ձեռնարկատիրական հաջողությունների արձանագրում՝ ներառյալ ֆինանսների կառավարում, բիզնես համակարգերի ամրապնդում, ցանցային և հիմնական շուկայական ոլորտներում:

• Հայաստանում և Վրաստանում երիտասարդների շրջանում սոցիալական ձեռնարկատիրության էկոհամակարգի ամրապնդում:

Ծրագիրը վերահսկելու և գնահատելու է երիտասարդ սոցիալական ձեռներեցների տնտեսական ցուցանիշների բարձրացման շնորհիվ ունեցած ազդեցությունը, ապահովելու համար սոցիալական ոլորտում իրականացվող այս գործունեության շարունակական բնույթը ծրագրի ավարտից հետո:

Սույն ուսումնասիրության նպատակն է վերլուծել, գնահատել և առաջարկել ծրագրի կողմից ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում ստեղծվելիք ՍՁ-ների ձևավորման համար իրավական կարգավիճակի տարբերակներ:

Ելնելով ծրագրի նպատակներից, սույն ուսումնասիրության շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Ուսումնասիրվել է ՍՁ-ների միջազգային փորձը, հիմք ընդունելով ԵՄ կանոնակարգերը և ԵՄ անդամ և ոչ անդամ երկրների փորձը:
- Ուսումնասիրվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ այլ իրավական ակտերով առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների կարգավիճակը, գործունեության շրջանակը, ուժեղ և թույլ կողմերը, հիմնական տարբերությունները, ինչպես նաև ՍՁ-ների ստեղծման կամ վերակազմակերպման հնարավորությունը՝ պարզ ընթացակարգով:





EU4Youth

- Ուսումնասիրվել են ՀՀ գործող հարկային օրենսդրությունն ու այլ հարակից ակտերը, որոնք կարգավորում են ինչպես առևտրային այնպես էլ ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը, առանձին ակնարկ է կատարվել հարկային ոլորտի առանձնահատկություններին, համնապատասխան առաջարկներով:
- Ուսումնասիրվել են ՀՀ գործող կազմակերպությունները, որոնց գործունեությունն իր բնույթով նման է կամ նմանատիպ ՍՁ-ների գործունեությանը:
- Առաջարկվել են ՍՁ զբաղվող կազմակերպության ստեղծման/գործունեության իրավական մոդելի վերաբերյալ առաջարկներ (ընդունելի տարբերակ):
- Ուսումնասիրվել է «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, ներկայացվել են առաջարկները, նկատողությունները, հիմնական մտահոգությունները:
- Կազմակերպվել են ՍՁ-ների ստեղծման գործընթացի վերաբերալ խմբեր և խորհրդատվական բնույթի հանդիպումներ թիրախային խմբի մեջ մտնող շահառուների հետ, որոնք են՝ Շիրակի, Տավուշի և Լոռու մարզի ՍՁ-ները, բիզնես ոլորտի և համայնքի ներկայացուցիչները, ինչպես նաև՝ ծրագրի թիմի ՁՍ-ի ներկայացուցիչները, որոնց դիրքորոշումներն ու կարծիքները ամփոփվել և ներկայացվել են սույն ուսումնասիրության շրջանակներում:

2.1. ՍՁ հասկացություն, ընդհանուր նկարագիր, ներկայիս իրավիճակը ՀՀ-ում.

ՍՁ հասկացությունը հայտնի դարձավ 20-րդ դարի կեսերին, որպես ձեռնարկատիրությունը սոցիալական առաքելության հետ համատեղելու նոր միտում: Իր զարգացման հետ մեկտեղ





EU4Youth

անհրաժեշտություն առաջացավ ունենալ ՄՁ հասկացության վերաբերյալ համընդհանուր պատկերացում, որն ունակ է արտացոլել դրա նպատակներն ու հիմնական չափորոշիչները, որպես ՄՁ դրանք տարբերակելու համար:

Այդ էր պատճառը, որ, գիտնականների և պետական ինստիտուտների կողմից առաջ քաշվեցին ՄՁ հասկացության և դրա սահմանման տարբեր մոտեցումներ, որոնք այնուամենայնիվ, միևնույն նպատակն են հետապնդում՝ տալ ՄՁ-ի հնարավորինս համապարփակ ու ճշգրիտ ձևակերպում:

Այսպիսով, Եվրոպական Հանձնաժողովի Սոցիալական Ձեռնարկատիրության Նախաձեռնության Հաղորդակցական առաջարկեց սոցիալական բիզնեսի/սոցիալական ձեռնարկատիրության հետևյալ հասկացությունը, համաձայն որի, սոցիալական ձեռնարկատիրությունը դա ձեռնարկատիրական գործունեության այն տեսակներն են.

- Որոնց համար հասարակության համընդհանուր բարեկեցությունը համարվում է բավարար պատճառ շահույթ ստանալու նպատակով գործունեություն իրականացնելու համար, հաճախ սոցիալական նորարարության միջոցով .
- Որոնք օգտագործում են դրամական միջոցների ավելցուկը հիմնականում այդ սոցիալական նպատակներին հասնելու համար .
- Որոնք ղեկավարվում են սոցիալական ձեռնարկատերերի կողմից հաշվետու, թափանցիկ և նորարարական ձևով, մասնավորապես, ներգրավելով այնպիսի աշխատողներ, հաճախորդներ և շահառուներ, որոնց վրա այդ բիզնեսն ազդեցություն է ունեցել¹.

¹ https://ec.europa.eu/growth/sectors/social-economy/enterprises_en





EU4Youth

ՍՁ սահմանումների համեմատական վերանայման արդյունքում հայտնաբերվել են տարբեր դպրոցներ՝ իրենց մոտեցումներով, սակայն դրանց մեծամասնությունը համաձայնության է եկել ՍՁ-ի լայն սահմանում ունենալու վերաբերյալ:

Չնայած գիտնականների և փորձագետների կողմից առաջարկվող տարբեր սահմանումների, այնուամենայնիվ, համընդհանուր մոտեցում ունենալու հարցում դեռևս առկա է բաց, այսինքն չկա այնպիսի միասնական ու համապարփակ սահմանում, որը կարող է կիրառելի լինել ցանկացած և յուրաքանչյուր երկրում, հաշվի առնելով տարբեր ազգային կարգավորումները, առանձնահատկությունները, կարիքներն ու մարտահրավերները:

Հաշվի առնելով այն, որ ՍՁ կոնցեպտը ՀՀ-ում նոր է ձևավորվել, այն դեռ անհրաժեշտ է զարգացնել և կարգավորել այնպես, որպեսզի հնարավորինս բացառվի այն բարեգործության, երբեմն նաև կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հետ շփոթելու հավանականությունը:

Պետական մարմինները, ինչպիսիք են՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Հարկային ծառայությունը, Արդարադատության նախարարությունը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, Էկոնոմիկայի նախարարությունը այսօր, ցավոք, փաստացի որևէ դեր չեն խաղում սոցիալական ձեռնարկատերերին ՍՁ-ի հիմնադրման վաղ փուլում ուղղորդելու, խորհրդատվություն տրամադրելու կամ որոշակի օգտակար տեղեկություն տրամադրելու հարցում, ինչը հետևանք է ՍՁ կոնցեպտի վերաբերյալ պատկերացման և որևէ կարգավորման բացակայության (լինի դա աշխատանքային թե՛ իրավական սահմանում): Որպես արդյունք, ՀՀ-ում գրանցված այն կազմակերպությունները, որոնք քիչ թե շատ զբաղվում են սոցիալական ձեռնարկատիրական գործունեությամբ, ընտրում են իրենց կազմակերպաիրավական ձևը՝ հաշվի առնելով ՀՀ-ում գործող





EU4Youth

օրենսդրությունը հարկային, հաշվապահական, պետական գրանցման, աուդիտի պահանջների և այլնի վերաբերյալ, առաջնորդվելով նվազագույն ռիսկերով գործելու սկզբունքով:

Համաձայն The Overview of the Social Economy of Armenia” զեկույցի, ՄՁ-ները ՀՀ-ում դե-ֆակտո «թաքնված են» տարբեր տեսակի կազմակերպարարական ձևերի տակ, որոնցից են հիմնականում՝ ՄՁ, ՄՊ ընկերությունները, ոչ առևտրային կազմակերպությունները, հիմնադրամները և կոոպերատիվները».²

Այնուամենայնիվ, վերը թվարկված ձևերից և ոչ մեկը ճշգրտությամբ չի արտացոլում ՄՁ-ի էությունը. ստանալ շահույթ՝ սոցիալական նպատակներին հասնելու կամ սոցիալական առաքելությունն իրականացնելու համար:

Փորձագետների մեծ մասի կարծիքով, ՄՁ-ների համար հատուկ նորմատիվ-իրավական կարգավորման անհրաժեշտություն ՀՀ-ում այսօր չկա (այստեղ նաև հաշվի են առնվել առևտրային կազմակերպությունների կողմից էթիկական խախտումների և կոռուպցիոն սովորույթների ձևավորման հնարավոր ռիսկերը, որոնցից ամենահավանականն է որպես «սոցիալական» գրանցվելը՝ ստանալու համար օրենքով սահմանված բոլոր առավելություններն ու հնարավոր հարկային արտոնություններն առանց որևէ սոցիալական ազդեցություն ունենալու միտման):

Չնայած դրան, փորձագետները միաձայն են, որ անհրաժեշտ է մշակել ՄՁ կոնցեպտի աշխատանքային կարգավորում՝ հիմնական չափորոշիչներով և կարևոր առանձնահատկություններով, որոնց շնորհիվ պետությունն ու հիմնական շահառուները կկարողանան տարբերակել և ճիշտ մոտենալ նմանատիպ կազմակերպություններին:

² The Overview of the Social Economy of Armenia: Social Enterprises of Shirak, Tavush and Lori marzes, May 2020, p.4





EU4Youth

2.2. Օրենսդրական ուսումնասիրություն.

Սույն փաստաթղթի շրջանակներում ուսումնասիրվել են մի շարք իրավական ակտեր, որոնց դրույթներն այս կամ այն կերպ կիրառելի են ՍԶ-ների գործունեության նկատմամբ և հանդիսանում են ՍԶ գրանցման կազմակերպա-իրավակազմակերպական տեսակներից մեկը, և որոնք, համապատասխան մեջբերումներով և ամփոփմամբ, թվարկված են ստորև:

2.2.1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք.

ՀՀ ՔՕ սահմանում է իրավաբանական անձանց հետևյալ տեսակները.

- Իրավաբանական անձինք, որոնց գույքի կազմավորմանը մասնակցելու կապակցությամբ, նրանց հիմնադիրները (մասնակիցները) ունեն պարտավորական իրավունք և
- Իրավաբանական անձինք, որոնց գույքի կազմավորմանը մասնակցելու կապակցությամբ, նրանց հիմնադիրները (մասնակիցները) նմանատիպ իրավունք չունեն:

Առաջիններին են դասվում տնտեսական ընկերակցությունները և ընկերությունները, իսկ վերջիններին են պատկանում հասարակական միավորումները և հիմնադրամները:

Մինևույն ժամանակ, ՔՕ իրավաբանական անձինք տարանջատվում են նաև հիմք ընդունելով իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդելու (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդելու և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխելու (ոչ առևտրային) չավորոշիչը: Հիմնական “ձեռնարկատիրական” տարբերությունը այս երկու տեսակների միջև կայանում է շահույթի բաշխման/չբաշխման հնարավորության մեջ:

Ստորև ներկայացվում են թվարկված կազմակերպաիրավական ձևերից յուրաքանչյուրի մասով կատարված ուսումնասիրությունները՝ համապատասխան մեկնաբանություններով:





EU4Youth

2.2.2. Ոչ առևտրային կազմակերպություններ.

2.2.2.1. Հասարակական միավորումներ

Հասարակական միավորումները, համաձայն ՀՀ ՔՕ 50-րդ հոդվածի, պատկանում են այն իրավաբանական անձանց թվին, որոնց նկատմամբ նրանց հիմնադիրները չունեն պարտավորական իրավունքներ: Այս տեսքով ստեղծվում են հիմնականում ոչ առևտրային կազմակերպություններ:

2.2.2.2. Հիմնադրամ

Համաձայն ՀՀ ՔՕ 152-րդ հոդվածի և «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, *«Հիմնադրամ է համարվում քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպությունը, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ»:*

Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է, որը կազմավորվում է հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված կարգով, նման կարգ սահմանված չլինելու դեպքում՝ յուրաքանչյուր հիմնադիր հոգաբարձուների խորհրդի մեկ անդամ սկզբունքով: Խորհրդի քանակական կազմը չի կարող պակաս լինել 3 անդամից: Հոգաբարձուների խորհրդի իրավասություններից են՝ հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը, հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում՝ անձամբ) ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը, հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը, հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը, հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը, տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և





EU4Youth

հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը, և այլն:

Հիմնադրամի ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ կարգավորումները համեմատաբար ավելի խիստ են, օրինակ՝ ձեռնարկատիրական գործունեության տեսակը պետք է նախատեսված լինի հիմնադրամի կանոնադրությամբ, պետական վերահսկողության իրականացման առումով իրենք դասակարգվում են առավել ռիսկային չափանիշներ ունեցող կազմակերպությունների խմբին և այլն:

2.2.2.3. Կոոպերատիվ (գյուղատնտեսական, սպառողական և այլն)

ՀՀ ՔՕ 117-րդ հոդվածի համաձայն. «*Կոոպերատիվ է համարվում քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումը*»:

Կոոպերատիվները՝ կախված իրենց գործունեության բնույթից, կարող են լինել շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ նման նպատակ չհետապնդող (ոչ առևտրային) կազմակերպություններ: Կոոպերատիվների առանձին տեսակներից բացի (սպառողական կոոպերատիվներ, գյուղտնտեսական կոոպերատիվներ), որոնց առանձնահատկությունները և իրավական վիճակը սահմանվում են ՀՀ ՔՕ և այլ օրենքներով, կոոպերատիվների այլ տեսակներ չեն սահմանվում:

Սույն փաստաթղթի նպատակներից ելնելով, մենք ուսումնասիրել ենք ոչ առևտրային բնույթ ունեցող կոոպերատիվները, նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ սպառողական կոոպերացիան իր սուբյեկտային կազմով տարբերվում է ոչ առևտրային բնույթ ունեցող կոոպերատիվներից: Այսպես օրինակ, սպառողական կոոպերատիվում որպես մասնակիցներ (անդամներ) կարող են լինել





EU4Youth

քաղաքացիները և (կամ) համատեղ գործունեության պայմանագիր կնքած անհատ ձեռնարկատերերն ու գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիները: Նշենք նաև, որ սպառողական կոոպերացիան կարգավորող օրենքն ընդունված է ՀՀ Գերագույն խորհրդի կողմից «13» դեկտեմբերի 1993 թ. Հ.Ն-0966-I:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսական կոոպերատիվներին, ապա ՀՀ «Գյուղատնտեսական կոոպերատիվների» մասին օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն, գյուղատնտեսական կոոպերատիվը հիմնված է ագրոպարենային համակարգում գործունեություն իրականացնող քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա և ուղղված է տնտեսավարողների նյութական, սոցիալական և այլ կարիքներին առավել արդյունավետ բավարարման նպատակով:

Գյուղատնտեսական կոոպերատիվները հարկային օրենսդրության տեսանկյունից ունեն առանձնահատուկ կարգավիճակ. ընդհանուր հարկման համակարգում գտնվող գյուղատնտեսական կազմակերպությունների նկատմամբ կիրառվում են ոչ առևտրային կազմակերպություններին վերաբերվող կարգավորումները, սակայն այդպիսի կազմակերպությունները կարող են գործել նաև հարկման հատուկ համակարգերում, որոնք որպես արտոնյալ համակարգեր նախատեսված են առևտրային կազմակերպությունների գործունեության համար: Ստացվում է, որ գյուղատնտեսական կազմակերպությունների (այդ թվում՝ կոոպերատիվների) նկատմամբ կիրառելի են ինչպես ոչ առևտրային, այնպես էլ առևտրային կազմակերպություններին բնորոշ առանձնահատկությունները, «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի իմաստով ոչ առևտրային կազմակերպություն է համարվում միայն կոոպերատիվների միությունը, սակայն, եթե հաշվի առնենք այն





EU4Youth

հանգամանքը, որ կոոպերատիվների մոտ նախատեսված է գույքի բաշխում նրա անդամների միջև, կոոպերատիվի ավելցուկը կարող է բաշխվել որպես փոխհատուցում, կոոպերատիվը ստեղծվում է միայն իր մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով, ինչպես նաև այն, որ այստեղ նախատեսված է ներդրող անդամի ինստիտուտը և այլն, անհրաժեշտ է նշել, որ բովանդակային առումով կոոպերատիվին բնորոշ են ինչպես առևտրային այնպես էլ ոչ առևտրային կազմակերպություններին վերաբերվող հատկանիշները:

2.2.2.4. Հասարակական կազմակերպություններ

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը սահմանում է հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ՀԿ), որպես ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա պետությունների քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ ֆիզիկական անձ) և (կամ) իրավաբանական անձանց հասարակական միավորում, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

ՀԿ-ների՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը համահունչ է միջազգային չափանիշներին, որոնց համաձայն ՀԿ-ները պետք է ունենան ցանկացած օրինական գործունեությամբ զբաղվելու հնարավորություն: Այստեղ հարկ է նշել, որ մինչև 2017թ. միայն հիմնադրամներին էր թույլատրված իրենց վերաբերող օրենսդրությանը համապատասխան ուղղակիորեն զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ: Սակայն «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետը երկարատև փորձերից և

ծավալուն ջանքերից հետո վերջիվերջո փոփոխվեց, սահմանելով, որ. *«Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն*





EU4Youth

կամ դառնալ նրա մասնակից», դրանով իսկ, ըստ էության, հայկական օրենսդրության պատմության մեջ առաջին անգամ ՀԿ-ներին թույլ տալով ուղղակիորեն զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ և վերացնելով դրանց նկատմամբ գոյություն ունեցած խտրական վերաբերմունքը:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը ողջ աշխարհում ՀԿ-ների համար եկամտի ձևավորման կարևորագույն աղբյուրներից է: Սակայն, թույլատրելով ՀԿ-ներին զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, օրենսդիրը լրացուցիչ բեռ է սահմանել կազմակերպության համար, ներառելով ձեռնարկատիրական գործունեության առանձնացված հաշվառման վարման վերաբերյալ պարտավորություն՝ դրա վերաբերյալ տեղեկությունները ներառելով օրենքով նախատեսված հաշվետվություններում և, միևնույն ժամանակ, սահմանելով, որ կազմակերպության կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված շահույթը պետք է օգտագործվի միայն կազմակերպության կանոնադրական նպատակների ուղղությամբ:

Այստեղ որոշակի մտահոգություն է առաջանում, կապված «*ձեռնարկատիրական գործունեության համապատասխանությունը կանոնադրական նպատակներին*» ձևակերպման հետ, քանի որ վերջինս լիազոր մարմնի կողմից կարող է գործնականում լայն ու տարածական մեկնաբանման տեղիք տալ և որակվել որպես Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.27-րդ հոդվածով նախատեսված արարք, այն է՝ ՀԿ-ի կողմից կանոնադրության նպատակներին անհամապատասխան գործունեության իրականացում, ինչը կարող է հանգեցնել ընդհուպ մինչև կազմակերպության հարկադիր լուծարման:





EU4Youth

Հետևաբար, նպատակահարմար ենք համարում հստակ սահմանել համապատասխանության թեկուզև նվազագույն չափորոշիչները՝ նորմի կամայական մեկնաբանությունից խուսափելու նպատակով, հիմք ընդունելով այն մոտեցումը, որ իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը չպետք է հակասի կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված առաքելությանն ու նպատակներին: Ուստի, որպես լուծում (այսինքն՝ ՄՁ հայեցակարգի ընդունմամբ պայմանավորված այլ իրավական ակտերում փոփոխության անհրաժեշտություն) առաջարկում ենք «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ ամրագրելով, որ գործունեությունը համարվում է կանոնադրությանը համապատասխան, եթե այն չի հակասում ՀԿ կանոնադրությանը:

Հակառակ դեպքում, ստացվում է, որ այս դրույթը թույլ է տալիս ՀԿ-ին զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, ապահովելու համար իր ֆինանսական կայունությունը, սակայն ոչ՝ կարգավորող օրենքով և ո՛չ էլ ՀՕ այդպիսի գործունեությամբ զբաղվելու համար կազմակերպությունը որևէ արտոնյալ հարկային ռեժիմներից չի օգտվում: Ավելացնենք նաև այն, որ նշված դրույթը սահմանափակում է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը պայմանով, որ դրանից ստացված եկամուտը կուղղվի միայն կազմակերպության կանոնադրական նպատակների ուղղությամբ ծախսելուն: Այս մասով, կարծում ենք, կա որոշակի հստակեցման կարիք, քանի որ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքը. կազմակերպությունը, զբաղվելով ձեռնարկատիրական գործունեությամբ և ծախսելով այն միայն իր կանոնադրական նպատակների ուղղությամբ, պարտավոր է լինելու ունենալ պատշաճ հիմնավորումներ և հաշվետվություններ, որոնք հավաստում են տվյալ պահանջի կատարումը: Ինչ վերաբերում է հարկային մարմիններին, ապա վերջիններս, բացառելու համար հնարավոր կեղծիքներն





EU4Youth

և չարաշահումները, կարող են սկսել պահանջել նաև ավելորդ փաստաթղթեր, ինչը հատկապես ՀԿ հանդիսացող ՍՁ-ների դեպքում նպաստելու է վարչարարության ու ավելորդ փաստաթղթաշրջանառության աճին, այսպիսով հայտնվելով հարկային մարմինների առանձնահատուկ ուշադրության կենտրոնում: Այստեղ լավագույն լուծումը համարում ենք ՀՕ 254-րդ հոդվածում և 267-րդ հոդվածում համապատասխան մասերում հանել «առևտրային կազմակերպություն» բառակապակցության մեջ «առևտրային» բառը:

Պետք է հավելենք, որ Հանձնարարականի «Հիմնարար սկզբունքներ» վերնագրամամբ 1-ին բաժնի 8-րդ կետի համաձայն՝ կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը խրախուսելու համար պետությունը պետք է արտոնյալ հարկային քաղաքականություն իրականացնի:³

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի մեկ այլ՝ 26-րդ հոդվածի համաձայն. եթե կազմակերպությունը հաշվետու տարվա ընթացքում հանրային միջոցներից ֆինանսավորվել է հինգ միլիոն և ավելի ՀՀ դրամի չափով, ապա օրենքով սահմանված կարգով պետական մարմիններ ներկայացված նրա տարեկան ֆինանսական հաշվետվությունները հանրային միջոցներից ֆինանսավորման մասով ենթակա են պարտադիր աուդիտի:

Անհրաժեշտ է գնահատել, թե որքանո՞վ է հիմնավորված «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի հիշյալ նորմով նախատեսված պարտավորության կատարման պահանջն այն դեպքում, երբ հանրային միջոցներից ֆինանսավորման ժամանակ տրամադրվող միջոցների չափի մեջ առանձին չի ներառվում ֆինանսավորման մասով ենթակա պարտադիր աուդիտի անցկացման համար անհրաժեշտ ֆինանսավորման չափը, որը հետագայում լրացուցիչ բեռ է դառնում ՀԿ-ների համար: Շատ դեպքերում անկախ աուդիտ անցկացնող կազմակերպություններին վճարվող դրամական

³ https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805d534d





EU4Youth

միջոցների չափը բավականին մեծ գումար է կազմում՝ համեմատած կազմակերպությանը տրամադրված հանրային դրամական միջոցների չափի հետ:

Հարկ է նշել, որ միջազգային դոնոր կազմակերպություններն իրենց կողմից տրամադրված ֆինանսական միջոցների չափի մեջ սովորաբար որոշակի չափով դրամական միջոցներ են նախատեսում նաև կազմակերպության կողմից իրականացվող ծրագրերի աուդիտի անցկացման համար, այս մոտեցումը առաջարկում ենք ամրագրել նաև հանրային դրամական միջոցների ներգրավման դեպքում:

Վերոնշյալ կարգավորումը հատկապես U2 կոնտեքստի առումով խնդիրներ է առաջացնում այն դեպքում, երբ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք ունեցող ՀԿ-ն իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար, օրենքով սահմանված կարգով զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ և այդ գործունեության շրջանակներում մասնակցում է պետական կարիքների համար կատարվող գնումներին ու գնման որևէ ընթացակարգի շրջանակներում ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման պայմանագրերի իրականացման դիմաց կազմակերպության եկամտի ստացման աղբյուր են հանդիսանում պետական կամ համայնքային միջոցները: Այս դեպքում ՀԿ-ի նկատմամբ կիրառելի է դառնում պարտադիր աուդիտ անցնելու օրենսդրական պահանջը, քանի որ ստացված եկամուտը նույնպես համարվում է հանրային միջոց: Այդպիսի պահանջի առկայությունը ըստ մեզ, խտրական վերաբերմունքի դրսևորում է, քանի որ ի տարբերություն միևնույն փաստական հանգամանքներում գործող այլ առևտրային կազմակերպությունների, ՀԿ-ի պարագայում պարտադիր աուդիտի պահանջով ծանրաբեռնված ապրանքի/ծառայության գինը թանկանում է՝ աուդիտորական ծառայության արժեքի և





EU4Youth

ծախսված ժամանակի ու ռեսուրսների արժեքի չափով, իսկ այլ կազմակերպաիրավական ձև ունեցող սուբյեկտների համար այդպիսի պահանջ սահմանված չէ:

Առաջարկություն. Առկա խտրականությունը վերացնելու, թափանցիկությունը բարձրացնելու և հանրային միջոցների օգտագործման արդյունավետությունը բարելավելու նպատակով, առաջարկում ենք վերացնել պարտադիր աուդիտի պահանջը այն ծրագրերի նկատմամբ, որոնք ֆինանսավորվում են հանրային միջոցներից, անհրաժեշտության դեպքում այն ներառելով բացառապես պետությունից ստացված միջոցների տրամադրման պայմանագրերում:

2.2.3. Առևտրային կազմակերպություններ .

Առևտրային կազմակերպություն համարվող իրավաբանական անձանց թվին են պատկանում. լիակատար ընկերակցությունը, վստահության վրա հիմնված ընկերակցությունը, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունը, բաժնետիրական ընկերությունը:

Սույն փաստաթղթի իմաստով և նպատակներից ելնելով, ուսումնասիրվել են՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, բաժնետիրական ընկերությունը և անհատ ձեռնարկատերերը, որպես ՀՀ-ում ամենատարածված կազմակերպաիրավական ձևեր:

Ընթերցանության հարմարավետության նպատակներից ելնելով ՀՀ-ում գործող ամենատարածված կազմակերպաիրավական ձևերից յուրաքանչյուրի նկարագրությունը, իրենց մանրամասներով կցված է սույն փաստաթղթին Աղյուսակ Ա-ի տեսքով:

2.2.3.1. Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ, բաժնետիրական

ընկերություններ .





EU4Youth

Համաձայն ՀՀ ՔՕ 95-րդ հոդվածի և «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի. *«Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները պատասխանատու չեն նրա պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը»:*

Ինչ վերաբերում է բաժնետիրական ընկերություններին, ապա համաձայն ՀՀ ՔՕ 95-րդ հոդվածի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, այդպիսին է համարվում այն ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է որոշակի թվով բաժնետոմսերի: Բաժնետիրական ընկերությունները լինում են բաց և փակ:

2.2.3.2. Անհատ ձեռնարկատերեր

ՀՀ ՔՕ իրավունք է տվել քաղաքացուն, որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու պահից, առանց իրավաբանական անձ կազմավորելու, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

Ընդ որում, քաղաքացիներն առանց պետական գրանցման կամ հաշվառման (առանց իրավաբանական անձ կազմավորելու կամ անհատ ձեռնարկատեր հաշվառվելու) իրավունք ունեն զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, եթե օրենքով սահմանված կարգով հաշվառվել են հարկային մարմնում և ստացել են արտոնագիր կամ գյուղատնտեսական արտադրանք արտադրելու նպատակով կնքել են համատեղ գործունեության պայմանագիր, ինչպես նաև օրենքներով սահմանված այլ դեպքերում: Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիները ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ են հանդիսանում միայն տվյալ համատեղ գործունեության պայմանագրի սահմաններում:





EU4Youth

Անհատ ձեռնարկատերերի նկատմամբ կիրառվում են օրենսդրությամբ առևտրային կազմակերպություններ համարվող իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող կանոնները, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից կամ իրավահարաբերության էությունից:

2.2.4. Բարեգործության մասին օրենք

Բարեգործության մասին օրենքը սահմանում է բարեգործությունը որպես ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից բարեգործության նպատակների իրականացման համար ֆիզիկական անձանց, առողջապահական և ոչ առևտրային կազմակերպություններին կամավոր, անշահախնդիր, օրենքով չարգելված (անհատույց կամ արտոնյալ պայմաններով) նյութական և հոգևոր օգնության տրամադրում: Նույն օրենքը բարեգործություն չի համարում կուսակցություններին և առևտրային կազմակերպություններին (բացառությամբ առողջապահության բնագավառի կազմակերպությունների) դրամական և այլ նյութական միջոցների հատկացումը:

Հատկանշական է, որ Բարեգործության մասին օրենքի 2-րդ հոդվածը բարեգործության նպատակի տակ ընդգրկում է հետևյալ լայն շրջանակը.

1) աջակցել այն ֆիզիկական անձանց (հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, գործազուրկներին), ինչպես նաև սակավ ապահովված ընտանիքներին, որոնք չեն կարող ինքնուրույն ապահովել իրենց նյութական և հոգևոր պահանջները.

2) աջակցել ոչ առևտրային այլ կազմակերպություններին.

2¹) աջակցել առողջապահության զարգացմանը.





EU4Youth

- 3) նյութական օգնություն տրամադրել պատերազմի, տարերային աղետների, վարակիչ հիվանդությունների, համաճարակների և արտակարգ այլ իրավիճակների հետևանքով տուժած անձանց և մասնակցել դրանց հետևանքների վերացմանը.
- 4) աշխատատեղերի ստեղծման կամ գործազուրկների վերապատրաստման ճանապարհով աջակցել սոցիալական օգնության կարիք ունեցող գործազուրկներին՝ աշխատանքի տեղավորման հարցում.
- 5) աջակցել զիտության, կրթության, արվեստի, գրականության, առողջապահության, սպորտի և ֆիզկուլտուրայի ոլորտների ծրագրերի իրականացմանը.
- 6) աջակցել պատմական, ճարտարապետական, մշակույթի և արվեստի հուշարձանների պահպանման և վերականգնման ծրագրերի իրականացմանը.
- 7) աջակցել բնության և շրջակա միջավայրի պահպանման և բարեկարգման աշխատանքների իրականացմանը.
- 8) աջակցել ՀՀ կառավարության հավանությանն արժանացած սոցիալական ծրագրերի իրականացմանը:

2.2.5. ՀՀ Աշխատանքային օրենսգիրք

ՀՀ ՍՕ որևէ առանձնահատուկ կարգավորում, կապված ՍՁ-ի հետ որպես գործատու առանձնահատուկ տեսակ սահմանված չէ:

ՀՀ ՍՕ 102-րդ հոդվածը անդրադառնում է կամավոր աշխատանքին և օգնություն ցուցաբերելու նպատակով կատարված աշխատանքին, որոնք համաձայն ՀՀ ՍՕ՝ չեն կարող համարվել անօրինական:

Այդպիսի աշխատանքների կատարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով:





EU4Youth

Այսինքն, ՀՀ ԱՕ նախատեսում է կամավոր աշխատանքների իրականացման կարգավորումը օրենքով, որոնցից են այս պահին «Բարեգործության մասին» օրենքը և «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքը:

Այսպես, «Բարեգործության մասին» օրենքի 9-րդ հոդվածի համաձայն . *«Կամավորներն այն ֆիզիկական անձինք, ովքեր սույն օրենքի նպատակներից ելնելով՝ կատարում են անհատույց աշխատանքներ բարեգործություն ստացողների օգտին»:* Նույն օրենքի 10-րդ հոդվածի համաձայն . *«Բարեգործություն ստացողներն այն ֆիզիկական և իրավաբանական անձինք են, որոնք իրենց համաձայնությամբ ստանում են բարեգործական աջակցություն»:*

Կամավորների վերաբերյալ հաջորդ կարգավորումը սահմանված է Հասարակական կազմակերպությունների մասին օրենքի 17-րդ հոդվածով, համաձայն որի. *«Կազմակերպությունը կարող է իր նպատակներին համապատասխան՝ ունենալ շահառուներ, ինչպես նաև իր աշխատանքներում ներգրավել կամավորներին»:* Կազմակերպության կողմից կամավորներ ներգրավելու իրավահարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Բարեգործության մասին» ՀՀ օրենքը և ՀՀ ԱՕ-ն այնքանով, որքանով այդ կարգավորումները չեն հակասում «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքին, ըստ հետևյալի .

Եթե կամավորի աշխատանքի տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը, ապա կազմակերպությունը կամավորների հետ կնքում է կամավոր աշխատանքի մասին պայմանագիր: Ընդ որում, կազմակերպությունը կամավորին հատուցում է տրամադրում կամավոր աշխատանքի իրականացման արդյունքում վերջինիս կողմից փաստացի կատարված ծախսերի դիմաց: Այստեղ սակայն, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ՀՀ ՀՕ չի թույլատրում կամավորներին օգտվել կամավորական գործունեությամբ զբաղվելու համար որևէ եկամտի նվազեցման իրավունքից հաշվի





EU4Youth

առնելով կամավորներին կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության մեջ ներգրավելու արգելքը:

Ստահագություններ. Ելնելով հետևյալ իրավակարգավորումների վերլուծությունից, հիմքեր ունենք եզրակացնելու, որ.

- առկա է ռիսկ, որ շաբաթական մինչև 20 ժամ տևողությամբ կամավոր աշխատանք իրականացնող անձինք կհամարվեն չգրանցված աշխատողներ, եթե նրանց հետ չկնքվեն կամավոր աշխատանքի մասին պայմանագրեր՝ հաշվի առնելով ՀՕ 412 հոդվածի և Կառ. 28 սեպտեմբերի 2017 թվականի N 1214-Ն որոշման դրույթները,

- առկա է կամավոր աշխատանքների կատարման նպատակով կամավորների ներգրավման ազատության իրական սահմանափակում, եթե կազմակերպությունը կամ ծրագիրը չի որակվել որպես «բարեգործական»՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առաջարկություն. Առաջարկում ենք սահմանել «կամավոր» եզրույթը, տրամադրել պարզաբանում կամավոր աշխատանքի օգտագործման հնարավորության վերաբերյալ՝ մինչև դրա օրենսդրական կարգավորումը, ՀՕ-ն՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխանեցնելու նպատակով ՀՕ-ի «Նորմավորվող ծախսեր» բաժնում ավելացնել կամավորներին վճարվելիք փոխհատուցման նորմա կամ առհաշիվ տրված գումարներին վերաբերվող բաժնում կամավորներին ևս ավելացնել *առհաշիվ անձ* հանդիսացող անձանց շարքում:





EU4Youth

Բացի այդ, առաջարկում ենք դիտարկել համապատասխան օրենսդրական փոփոխությունների հնարավորությունը, որոնց դեպքում ՍՁ-ին կթույլատրվի ներգրավվել շահույթ ստանալու նպատակով իրականացվող գործունեության մեջ՝ օգտագործելով կամավոր աշխատանք իրականացնող անձանց, եթե ՍՁ-ը վերջիններիս հետ կնքել է կամավոր աշխատանքի կատարման համապատասխան պայմանագրեր, այսպիսով թույլատրելով կամավորներներին օգտվել կամավորական գործունեությամբ զբաղվելու դիմաց ստացված եկամտի նվազեցման իրավունքից և վերացնել կամավորներին կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության մեջ ներգրավելու արգելքը:

2.2.6. ՀՀ Հարկային օրենսգիրք

ՍՁ ոլորտի զարգացման նախնական փուլը բնորոշվում է ակտիվ դրամաշնորհային ծրագրերի ներգրավմամբ: Սակայն կազմակերպությունները շատ հաճախ առերեսվում են Դրամաշնորհների հարկման անորոշություններին: «Դրամաշնորհ» եզրույթը ՀՀ օրենսդրության մեջ սահմանված է կառավարության N 1934 առ 2003թ որոշմամբ, համաձայն որի. «դրամաշնորհը տնտեսության որևէ ճյուղի կամ գործունեության որևէ տեսակի խթանման նպատակով **բյուջեից** կազմակերպությանն իր կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական հատկացումն է»:

ՀՕ 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. *«Քաղաքացիական, վարչական, քրեական, աշխատանքային, ընտանեկան, հողային, բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության, լիցենզավորման, ծանուցման, թույլտվության և այլ հատուկ ոլորտների իրավական ակտերում կիրառվող հասկացությունները Օրենսգրքում կիրառվում են համապատասխան ոլորտի իրավական ակտերում կիրառվող իմաստով ու նշանակությամբ, եթե Օրենսգրքով այլ բան սահմանված չէ»:*





EU4Youth

Կիրառման իմաստով այստեղ անհասկանալի է, թե ՀՕ իմաստով ինչ՞ է համարվում դրամաշնորհ, եթե խոսքը գնում է ոչ պետական բյուջեից ստացված միջոցների մասին:

Սահմանադրական դատարանը իր ՄԴՕ 1436 որոշմամբ անդրադարձել է այն հանգամանքին, որ սահմանադրական կարգավորումների համատեքստում և ՀՕ համապատասխան դրույթների վերլուծության արդյունքում հարկը սահմանված համարվելու համար միաժամանակ անհրաժեշտ է դրա բովանդակությունը կազմող տարրերի օրենքով հստակ սահմանում, իսկ դրանցից առնվազն որևէ մեկի բացակայությունն ինքնին նշանակում է, որ հարկը համարվում է չսահմանված: Այսինքն՝ հարկը սահմանված համարվելու համար անհրաժեշտ է այդ տարրերի այնպիսի հստակություն, որ դրանց լրացուցիչ հստակեցման կամ մանրամասնեցման կարիք չլինի, իսկ եթե կա նման անհրաժեշտություն, ապա այդպիսի հստակեցումը նույնպես պետք է տեղի ունենա օրենքով, քանի որ հարկի սահմանումն ինքնին իրականացվում է բացառապես օրենքին համապատասխան:

Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ «*օրենքին համապատասխան սահմանված հարկեր*» արտահայտությունը ենթադրում է ինչպես հարկի, այնպես էլ դրա բովանդակությունը կազմող տարրերի սահմանում բացառապես օրենքով: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հարկային պարտավորությունը կհամարվի օրենքին համապատասխան սահմանված, եթե ոչ միայն զուտ ձևական առումով այն ամրագրվի օրենքով, այլև դրա բովանդակությունը կազմող տարրերն իրենց ամբողջական արտացոլումը գտնեն օրենքում:

Մինչդեռ այս դեպքում եկամուտ համարվող (մասնավորապես՝ դրամաշնորհը) տարրի բովանդակությունը բացահայտվում է ոչ թե ՀՕ, այլ սուբյեկտիվ գնահատմամբ, ինչը կարող է հանգեցնել անձի սեփականության իրավունքին օրենքով չնախատեսված միջամտության:





EU4Youth

Քննարկվող եզրույթը իրավական որոշակիությանն առնչվող՝ ներկայացված դիրքորոշումների համատեքստում դիտարկելու արդյունքում արձանագրում ենք, որ նշված եզրույթից հստակ չէ, թե այն ու՞մ է ուղղված, և ի՞նչ գործողություններ պետք է կատարեն դրա հասցեատերերը:

Առաջարկություն. Առաջարկում ենք ՍԶ զարգացման կոնտեքստում դիտարկել «Դրամաշնորհ» եզրույթի հստակեցումը ոչ պետական բյուջեից ստացվող միջոցների մասով: Որպես օրինակ առաջարկում ենք հետևյալ սահմանումը.

«Դրամաշնորհը որոշակի նպատակային նշանակության անհատույց և անվերադարձ աջակցության միջոց է՝ օժտված ծրագրային հաշվետվողականությամբ: Դրամաշնորհային միջոցների ծախսումների հաշվառման նպատակով կազմակերպությունը պարտավոր է վարելու առանձնացված հաշվառում՝ ստացված միջոցների նպատակային օգտագործման բոլոր գործառնությունների մասով:»

Հարկ է նշել նաև, որ ՀՕ իրավակարգավորումների համաձայն՝ շահութահարկը հաշվարկելիս գործատուն արդեն իսկ օգտվում է աշխատավարձի լրացուցիչ 150 տոկոս նվազեցման հնարավորությունից, որը կարող է կարևորվել ՍԶ սոցիալական խնդրի և հարկային արտոնության միջև կապի տեսանկյունից⁴, իսկ նույն մասի 6-րդ կետով նախատեսվում է հարկման բազայից նվազեցում ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրված ակտիվների, դրանց համար կատարված աշխատանքների և (կամ) դրանց մատուցված ծառայությունների արժեքի չափով՝ բայց ոչ ավելի, քան հարկային տարվա համախառն եկամտի 0.25 տոկոսը:

⁴ ՀՕ 123 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն, շահութահարկ վճարողները հարկման բազան հաշվարկելիս կարող են նվազեցնել իրենց մոտ վարձու աշխատող համարվող, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա աշխատանք կատարող կամ քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա շահութահարկ վճարողին ծառայություն մատուցող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների, ինչպես նաև քաղաքացիաիրավական պայմանագրից ստացվող եկամուտների հանրագումարի 150 տոկոսը:





EU4Youth

Մեկ այլ կարևորկարգավորում է նաև սահմանված ՀՕ 159 հ. 4-րդ մասով, համաձայն որի, ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունների համար սահմանվում է որոշակի հարկային արտոնություն՝ շահաբաժնից գանձված հարկի չափով այն վերադարձնելու իրավունքը, որից օգտվելու կարգը և պայմանները սահմանված են ՀՀ Կառավարության կողմից⁵): Տե՛ս ստորև օրինակելի հաշվարկը. Դիցուք առևտրային XYZ ՍՁ-ն 2020թ հաշվետու տարվա արդյունքներով հայտարարում է 50մլն դրամ շահույթ, որը հաստատվում է բաժնետերերի տարեկան ժողովի կողմից 2021թ Ապրիլի 15-ին, և որոշում է կայացվում շահույթի հետագա բաշխման ուղղությունների վերաբերյալ, համաձայն որի՝ 30 տոկոս շահույթը պետք է բաշխվի երեք բաժնետերերի միջև (ուլքեր ունեն հավասար քանակի բաժնեմասեր, և հանդիսանում են ֆիզիկական անձինք), իսկ մնացած 70 տոկոսը պետք է ուղղվի կազմակերպության սեփական կապիտալի համալրմանը՝ սոցիալական և այլ զարգացման ծրագրեր իրականացնելու նպատակներով: Կազմակերպությունը որոշման արդյունքներով հաշվարկում է մասնակիցներին վճարման ենթակա շահաբաժինները 2021թ Մայիսի 15-ի դրությամբ (յուրաքանչյուր մասնակցի հաշվով (50մլն x 30%) / 3 անձ = 15մլն / 3 անձ = 5մլն դրամ համախառն), պահում է գանձման ենթակա եկամտային հարկը շահաբաժիններից՝ 5 տոկոս դրույքաչափով (յուրաքանչյուր բաժնետիրոջ մասով՝ 5մլն x 5% = 0.25մլն դրամ), և փոխանցում է յուրաքանչյուր բաժնետիրոջ հասանելիք գումարը՝ 4.75 մլն դրամի չափով (5մլն – 0.25մլն հարկ), ընդամենը գանձված եկամտային հարկը 0.75մլն դրամ: Ելնելով ձեռնարկատիրական գործունեության զարգացման հրամայականից, մասնակիցները որոշում են կայացրել ներդնել իրենց ստացած շահաբաժնից 2 մլն դրամ՝ յուրաքանչյուր մասնակցի կողմից, և օրենքով սահմանված կարգով ներդրման գումարի պետական գրանցումն իրականացրել են ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում Հունիսի 20-ին: Այս դեպքում, Հունիսի 20-ից հետո, յուրաքանչյուր

⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=117147>





EU4Youth

մասնակից իրավունք է ձեռք բերում, ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթերը, ետ ստանալ ներդրման արժեքի գումարը՝ բայց ոչ ավելի քան գանձված հարկի գումարը: Քանի որ մասնակցի կողմից ներդրումը կատարվել էր 2մլն դրամի չափով, սակայն իրենից գանձվել էր ընդամենը 0.25մլն դրամի չափով եկամտային հարկ, ապա վերադարձման ենթակա է 0.25մլն դրամը (եթե մասնակիցները որոշեին ներդնել 0,2մլն դրամ, ապա կվերադարձվեր միայն 0,2մլն դրամ ներդրումը, իսկ վճարած 0,05մլն դրամ հարկը (0.25մլն – 0.2մլն) վերադարձման ենթակա չէր լինի):

Այս դրույթը, մեր կարծիքով կիրառելի է որպես ՍԶ կազմակերպված առևտրային կազմակերպությունների նկատմամբ, ինչն իրենց պարագայում լուրջ ֆինանսական աջակցություն է:

2.2.7. Գովազդի մասին օրենք

«Գովազդի մասին» օրենքը սահմանում է բավական բարենպաստ կարգավորումներ սոցիալական գովազդի նկատմամբ, ինչը ողջունելի է: Այսպիսով, օրինակ, «Գովազդի մասին» օրենքը սահմանում է սոցիալական գովազդը, որպես առևտրային բնույթ չկրող (շահույթ ստանալու նպատակ չհետապնդող)՝ մարդու իրավունքներին և պարտականություններին, բնակչության առողջության պահպանման, ինչպես նաև առողջ ապրելակերպի և սոցիալական պաշտպանության, կամավորության, բնության պահպանության, կրթական ծրագրերի, հայրենասիրական դաստիարակության, մշակույթի պահպանման, տարածման ու զարգացման, աղետների դիմակայման, ազգային շահերի պաշտպանության և այլ բնագավառների վերաբերյալ հասարակությանը իրազեկելու նպատակով տարածվող տեղեկատվություն, որը օրենքով սահմանված կարգով ճանաչվել է որպես սոցիալական գովազդ: Հարկավոր է առանձին անդրադառնալ, գովազդի, որպես սոցիալական ճանաչվելու





EU4Youth

ընթացակարգին: Այսպիսով, արտաքին սոցիալական գովազդը, որը տարածվելու է մեկ համայնքի վարչական սահմաններում, կարող է որպես սոցիալական գովազդ ճանաչվել համայնքի ղեկավարի ստեղծած համայնքային հանձնաժողովի կողմից: Համայնքի ղեկավարի ստեղծած համայնքային հանձնաժողովի 3 անդամ առաջադրվում է տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներից, իսկ 5 անդամ՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից: Համայնքի ղեկավարի ստեղծած համայնքային հանձնաժողովի որոշման վերաբերյալ դիմումատուին տեղեկացնում է համայնքի ղեկավարը գովազդը որպես սոցիալական ճանաչվելուց հետո՝ 3-օրյա ժամկետում: Գովազդը սահմանված կարգով սոցիալական ճանաչվելուց հետո կարող է տարածվել ՀՀ ամբողջ տարածքում կամ ՀՀ ցանկացած վարչատարածքային միավորի սահմաններում և ազատված է ճանապարհային հարկից:

Այսպիսով ՀՀ-ում արդեն իսկ առկա է նախադեպ, որևէ գործունեության տեսակ որպես սոցիալական որակելու համար: Ավելին, օգտագործելով սոցիալական գովազդի արտոնյալ կարգավիճակը կարելի է իրականացնել ՍՁ-ի վերաբերյալ իրազեկման և ճանաչողական բնույթի լայն ծրագրեր և արշավներ: **Առաջարկություն.** ՍՁ զարգացման և խթանման նպատակով, առաջարկում ենք «Գովազդի մասին» օրենքում նախատեսել որոշակի լրացումներ և կարգավորումներ, որոնց միջոցով ՍՁ-ների կողմից արտադրվող ապրանքները և (կամ) մատուցվող ծառայությունները և (կամ) աշխատանքի/կամավոր ներգրավվելու հնարավորությունները գովազդելը՝ ՍՁ հանդիսացող կազմակերպության ապրանքային նշանի կամ նույնականացման այլ միջոցների օգտագործմամբ, նույնպես դիտարկվի որպես սոցիալական գովազդ:





EU4Youth

2.2.8. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք:

ՀՀ Սահմանադրության 180-րդ հոդվածի համաձայն՝ *«համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն է և հանդիսանում է հանրային իրավունքի իրավաբանական անձ»*: Պետք է նշել, որ որպես այդպիսին, *«հանրային իրավունքի իրավաբանական անձ»* եզրույթը ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չէ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի համաձայն՝ համայնքի պարտադիր խնդիրներից է, *inter alia*, բարեգործության խթանումը՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով: Նույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ ենթակետի համաձայն, համայնքի ավագանու լիազորություններից է համայնքային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշումների կայացումը, իսկ նույն հոդվածի 24-րդ ենթակետն ամրագրում է համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամավճարները մուծելու մասին որոշումների կայացման համայնքի ավագանու լիազորությունը:





EU4Youth

3. Մաս II

Ստորև ներկայացվում են ՀՀ կառավարությանը ներկայացված «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ» ՀՀ կառավարության որոշման նախագծի օրինակի վերանայման արդյունքները ու դրա վերաբերյալ առաջարկներն ու փոփոխությունները:

3.1. Հայեցակարգի վերանայում .

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԱԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ» ՀՀ կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Հայեցակարգ) բաղկացած է հետևյալ բաժիններից. ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ, ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ, ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ, ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ, ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ:

Հայեցակարգի հեղինակները մանրամասն անդրադառնում են ՍՁ-ի ոլորտում առկա իրավիճակին և խնդիրներին, խնդիրների լուծման հիմնական ուղղություններին և անհրաժեշտ միջոցառումներին, խնդիրների լուծման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների իրականացման համար պահանջվող միջոցներին և ակնկալվող արդյունքներին: Այս մասով մեր առաջարկներն ու փոփոխությունները ներկայացված են սույն Ուսումնասիրության 3.2-րդ կետում:

3.2. Առաջարկներ, փոփոխություններ:

Հայեցակարգի վերաբերյալ առաջարկներն ու փոփոխությունները հետևյալն են.

- Առաջարկվում է Հայեցակարգն ուղարկել իրավական փորձաքննության ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության գործակալություն, հստակեցնել իրավական եզրույթները ու կիրառվող





EU4Youth

հասկացությունները, գործող օրենսդրական ակտերի հետ հնարավոր հակասություններից և երկիմաստությունից խուսափելու նպատակով: Հարկ է նշել, որ ըստ մշակող փորձագետների, նախագիծն արդեն վերանայվել է նշված մարմնի կողմից, սակայն մեր կարծիքով, դեռևս կան թերացումներ, որոնք ցանկալի է շտկել:

Օրինակ, Հայեցակարգում կիրառվող հասկացությունները, իրավական որոշակիության սկզբունքի համատեքստում պետք է արտահայտել այնպես, որ չհասկացվեն այլ իրավական ակտերում սահմանված հասկացությունների հետ, որոնք որ կիրառվում են ոչ միևնույն նշանակությամբ (օրինակ՝ Հայեցակարգում կիրառվող որոշակի հասկացություններ հնարավոր է մեկնաբանվեն «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում կիրառվող նմանատիպ հասկացությունների իմաստով, որը կարող է հակասական մեկնաբանությունների տեղիք տալ վիճարկումների, կամ Հայեցակարգի կիրառման ժամանակ):

- Առաջարկվում է Հայեցակարգն ուղարկել սրբագրման, հաշվի առնելով Հայեցակարգում առկա լեզվաբանական անճշտությունները և վրիպակները:
- Ավելացնել, որ Հայեցակարգի ընդունումը միտված է առկա օրենսդրական խնդիրները լուծելու և տվյալ ոլորտը հետագա զարգացնելու անհրաժեշտությամբ:
- Առաջարկվում է Հայեցակարգում ավելացնել ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին համապատասխան դրույթները, քանի որ պարզ չէ, կա արդյո՞ք այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն, թեև նշվում է, որ գործող





EU4Youth

կարգավորումներիմեջ անհրաժեշտ է կատարել մի շարք լրացումներ և փոփոխություններ, որոնք կխթանեն ՍՁ ոլորտի զարգացումը:

- Առաջարկվում է գործող օրենսդրության կարգավորումների օգնությամբ կազմակերպությունները ՍՁ դասակարգելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության միջոցով, հիմնադրի (հիմնադիրների/մասնակիցների) որոշման հիման վրա, կազմակերպության կանոնադրության մեջ կատարել փոփոխություն՝ ավելացնելով համապատասխան դրույթներ սոցիալական ձեռնարկատիրության իրականացման հանձնառության վերաբերյալ, որը հստակ կսահմանի կազմակերպության կողմից ձեռնարկատիրական շահույթը ՍՁ-ների համար նախատեսված ուղղություններով բաշխելու և ՍՁ համար նախատեսված այլ ընթացակարգային պարտավորություններ ստանձնելու վերաբերյալ:
- Առաջարկվում է ավելացնել պահանջվող միջոցներին վերաբերող մասը, որին հղում է կատարվում Հայեցակարգի ԱՄՓՈՓ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ Բաժնի 3-րդ կետում, որը սակայն, բացակայում է փաստաթղթում:
- Առաջարկվում է լրամշակել Հայեցակարգի ֆինանսական ազդեցության գնահատականը:
- Առաջարկվում է մշակել հաշվետվողականության այնպիսի համակարգ, որն անհամաչափ բեռ չի ստեղծի ՍՁ-ների համար և օգտակար և անհրաժեշտ տեղեկություններ կտրամադրի հանրությանը և պետությանը: Այս տեղեկությունները պետք է արագ և մատչելի լինեն հանրության բոլոր անդամների համար, քանի որ ՍՁ-ների հաշվետվողականության նպատակները ներառում են նաև վերջինների գործունեության նկատմամբ հանրային





EU4Youth

վերահսկողության իրականացումը և անհատ դոնորների ու շահառուների իրավունքների պաշտպանությունը:

- Ավելացնել երիտասարդներին և կանանց ՍԶ ներգրավելու մեխանիզմը, որը կարևորությունը և խթանման անհրաժեշտությունն ընդգծվեց նաև «Հայաստանի զարգացման ռազմավարություն 2014-2025»⁶, այն պետք է ներառի գործարարական հմտությունների և կարողությունների զարգացման հստակ ուղեցույց:
- Առաջարկվում է թարմացնել Հայեցակարգի ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ կետում, որն առաջարկում է սոցիալապես խոցելի խավի ներկայացուցիչների կենսունակությունը տարբեր վճարների միջոցով ապահովող պետական հիմնադրամների/ֆոնդերի գումարների մի մասը վերաբաշխել այն ՍԶ-ներին, որոնք աշխատանքով են ապահովում վերջիններիս՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն փաստաթուղթը կազմելու պահին, արդեն առկա է նման պրակտիկա (այսպես օրինակ, մարզային համայնքներում ձեռնարկատերերը հիմնադրելով կազմակերպություններ և ներգրավելով աշխատակիցներ՝ ստեղծում են լրացուցիչ աշխատատեղեր, ինչն իր հերթին համընկնում է Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների (նախկինում զբաղվածության կենտրոններ) առջև դրված նպատակի և նպատակային ցուցանիշների հետ: Շատ հաճախ Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների նախաձեռնությամբ, վերջինիս կողմից այս ձեռնակատերերին առանց լրացուցիչ ընթացակարգային պահանջների և թղթաբանության տրամադրվում է ֆինանսական աջակցություն:

⁶ <https://www.gov.am/am/prsp/>





EU4Youth

- Առաջարկվում է վերանայել Հայեցակարգի 2 (գ) կետը, որն առաջարկում է պետական գնումների շրջանակներում որոշակի նախապատվություն սահմանել ՍՁ ներկայացուցիչների համար, հաշվի առնելով դրա ռիսկայնությունն ու հնարավոր չարաշահումների հնարավորությունը, որն անշուշտ խտրականության արդյունք է լինելու: Այնուամենայնիվ, առաջարկվում է տալ որոշակի նախապատվության իրավունք այն ՍՁ-ներին, որոնք պետական գնումներին մասնակցելու հայտ են ներկայացնում, սահմանելով նախապատվության իրավունքի տրամադրման որոշակի չափանիշներ:
- Առաջարկվում է վերանայել Հայեցակարգի ԱՄՓՈՓ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ կետում, եկամտային հարկի նվազեցում կիրառելու առաջարկը ՍՁ-ում ներգրավված հաշմանդամություն ունեցող անձանց համար, հնարավոր դրական և բացասական հետևանքները գնահատելուց հետո:
- Առաջարկվում է Հայեցակարգի 1 (1) կետում «ՍՁ-ների համար սահմանել անվճար հիմունքներով կամավորների ներգրավման առավել ճկուն համակարգ» նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «ՍՁ-ների համար սահմանել անվճար հիմունքներով միայն սոցիալական ծրագրերում կամավորների ներգրավման առավել ճկուն համակարգ» բառերը:

4. Մաս III

- 4.1. Առաջարկներ այսօր ՍՁ դաշտում գործող բիզնեսի և էկոհամակարգի արդյունավետ զարգացման համար. Իրավական ակնարկ, ՍՁ և էկոհամակարգի զարգացման հարկային և իրավական կողմերը:





EU4Youth

Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով ՄՁ և էկոհամակարգի զարգացման կարևորությունն ու դրանում երիտասարդներին և կանանց ՄՁ ներգրավելու անհրաժեշտությունը, առաջարկվում է կազմակերպել իրավական կրթությունը բարձրացնելու վերաբերյալ դասընթացներ և վարպետաց դասեր, որոնց ընթացքում երիտասարդներին և կանանց կներկայացվեն բիզնեսի հիմնադրման, դրա իրավական և հարկային կողմի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ, կներկայացվեն ՄՁ ոլորտին բնորոշ առանձնահատկությունները և այն կարևոր կետերը, որոնց հետ առնչվում են սկսնակ գործարարները, ներառյալ սակայն չսահմանափակվելով հետևյալով .

- Կազմակերպության հիմնադրում, կազմակերպչիրավական ձևի ընտրություն:
- Հաշվապահության հիմունքներ;
- Աշխատանքային օրենսդրություն;
- Հարկային օրենսդրություն;
- Ֆինանսական աջակցության ծրագրեր, դոնորների հետ կապեր և հաշվետվողականություն:

Պետական աջակցության հարցում պետք է ակնհայտ զգուշություն ցուցաբերել. ցանկացած դեպքում խտրական վերաբերմունքի ցուցաբերումը բացասական ազդեցություն է ունենում ձեռնարկատիրական միջավայրի վրա, և հանգեցնում է անառողջ մթնոլորտի ու անհավասար մրցակցության ձևավորմանը:

Մեր կարծիքով, հարկային արտոնությունների կիրառման ենթատեքստում կարևոր է պետության կողմից որևէ սոցիալական քաղաքականության իրականացման համընկնումը ՄՁ նպատակների հետ, և այն դեպքում, երբ ՄՁ կողմից իրականացվող սոցիալական գործունեությունը կհամընկնի պետության





EU4Youth

կողմից իրականացվող սոցիալական ծրագրերի հետ, կարելի է բարձրացնել այդ երկու ծրագրերի հատման մասով արտոնության կիրառման հարցը, օրինակ՝ երբ ՍՁ գործունեության տիրույթը հաստվում է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով նախատեսված սոցիալական աջակցման պետական կարգավորման միջոցառումների հետ, և սոցիալական ծառայությունների մատուցումն ինքնին ՍՁ նպատակների հետ համընկնում է: Այսպես. «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի նորմերի համաձայն Սոցիալական աջակցության պետական քաղաքականությունն իրականացնելիս լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, տարածքային մարմինները համագործակցում են սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների հետ: Լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, ՏԻՄ-երը, տարածքային մարմինները, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում տեղեկատվություն են փոխանակում սոցիալական աջակցություն ստացողների և իրենց տրամադրած սոցիալական ծառայությունների մասին: Լիազորած պետական մարմինը, տարածքային կառավարման պետական մարմինները, ՏԻՄ-երը, տարածքային մարմինները, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները **համագործակցում են այդ նպատակով ընդունված սոցիալական համագործակցության համաձայնագրի շրջանակներում, որը նախատեսվում է «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով և ներառում է համագործակցության նպատակներն ու սկզբունքները, սոցիալական աջակցման ցանցը, սոցիալական աշխատանքը և այլն:**





EU4Youth

Այսինքն, վերը նշված դեպքում, պետությունը կունենա տվյալ սոցիալական ծրագրերի գծով որոշակի ծախսերի խնայողություններ, և հնարավոր կլինի առանց պետական բյուջեի վրա չփաստարկված ծանրաբեռնվածության բանակցել հարկային արտոնությունների շուրջ:

Ի լրումն վերոնշյալի, ավելացնենք նաև, որ ՀՀ Կառավարության 27 հուլիսի 2017 թվականի N 910-Ն որոշմամբ նախատեսվել են սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում իրականացվող՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման (այսինքն՝ ձեռնարկատիրական գործունեության) ազատում ԱԱՀ-ից՝ որոշակի պայմանների առկայության դեպքում, եթե այդ գործունեությունը ներառում է տեղեկատվական տեխնոլոգիաների, զբոսաշրջության, գյուղատնտեսության, գիտության, կրթության, էներգետիկայի և բնապահպանության ոլորտներում իրականացվող ծրագրերը, որոնք խթանում են ՀՀ տնտեսության զարգացումը:

Արտոնությունից օգտվելու վիճակագրության վերաբերյալ մեր ուղարկված հարցմանն ի պատասխանն պարզվել է, որ վերը նշված նորմատիվ իրավական ակտի ընձեռած հնարավորություններից վերջին 4 և ավելի տարիների ընթացքում օգտվել է ընդամենը 2 կազմակերպություն: Այնուամենայնիվ, նույնիսկ այս փոքր թիվը, որպես նախադեպ թույլ է տալիս ենթադրել, որ ՀՀ Կառավարության 27 հուլիսի 2017 թվականի N 910-Ն որոշումն ինքնին շատ կարևոր և պոտենցիալ հնարավորություն է ՍՁ իրավակարգավորման համատեքտում որոշակի արտոնությունների մասին քննարկումներ ծավալելու, և պետություն-մասնավոր հատված երկխոսություն կառուցելու համար:





EU4Youth

4.2. ՄՁ-ների ստեղծման գործընթացի վերաբերյալ անցկացված ֆոկուս խմբային և խորհրդատվական բնույթի հանդիպումների արձանագրություններ:

2021 թվականի ընթացքում անցկացվել են որոշակի ֆոկուս խմբային և խորհրդատվական բնույթի

հանդիպումներ, որոնց վերաբերյալ **հակիրճ արձանագրությունները բերված են ստորև⁷:**

Խորհրդատվական բնույթ կրող հանդիպումների ընթացքում ՀԿ-ների և բիզնես հանրույթի ներկայացուցիչներին տրվել են նախապես մշակված հարցեր, քննարկվել են ՄՁ-ների հայաստանյան փորձը և դրանց իրավական կարգավիճակ տալու գործընթացները, տարբեր կազմակերպաիրավական կառույցների ուժեղ և թույլ կողմերը, հիմնական տարբերությունները: Հանդիպումներին մասնակցել են ՄՁ գործարկման փորձառություն ունեցող ՀԿ-ների ներկայացուցիչներ: Հարցումների նպատակն էր՝ բացահայտել ՄՁ-ների գործարկման փորձը, ներառյալ՝ հաջողություններն ու ձախողումները, ինչպես նաև պարզել ՄՁ-ների ստեղծման հնարավոր մոդելների վերաբերյալ մոտեցումները, հասկանալու համար ՄՁ-ների նախընտրելի մոդելը և ուրվագծել ամենաարդյունավետ ձևաչափը:

Տավուշի մարզի համայնքների ղեկավարների և այլ ներկայացուցիչների հետ հարցմանը մասնակցում էին Տավուշի մարզի Այրում, Բերդ, Նոյեմբերյան և Իջևան խոշորացված համայնքների և դրանց գյուղական համայնքների ներկայացուցիչներ: Հանդիպման նպատակն էր բացահայտել համայնքի կառավարման գործընթացում ՄՁ-ների գործարկման փորձը, ներառյալ՝ հաջողություններն ու ձախողումները, ինչպես նաև պարզել այն մոտեցումները, թե ինչպիսի՞ մոդել է հարկավոր ՄՁ-ների

⁷ <https://developmentprinciples.org/hy/հավելված-3-սձ-ների-ստեղծման-գործընթացի/>





EU4Youth

ստեղծման համար՝ ուրվագծելով ամենաարդյունավետ ձևաչափը և դրանցում ՔՀԿ-ների, բիզնեսի և պետության մասնակցության հարաբերակցությունը:

Արմեն Ամիրադյանը նշեց, որ ի լրումն համայնքում առկա գյուղատնտեսական խնդիրների, սահմանամերձ համայնքներն ունեն նաև անվտանգության և պաշտպանության խնդիրներ: Նա դրական արտահայտվեց ՍԶ-ների ստեղծման գաղափարի վերաբերյալ, ընդգծելով, որ ՔՀԿ-ները պետք է ունենան մեծ ներգրավվածություն և որոշումներ կայացնելու լիազորություն: Վերջինս նաև հավելեց, որ առավել նախընտրելի է, որ համայնքի և բիզնեսի ներկայացուցիչները ներգրավված լինեն ծրագրային գործողությունների իրականացմանը:

Հասմիկ Մելիքյանը հայտնեց, որ Բերդ համայնքն շատ դեպքերում նախաձեռնում է համայնքային զարգացման ծրագրեր, հիմնականում սոցիալական ոլորտի բարելավման նպատակով: Ինչ վերաբերվում է այլ սուբյեկտների նախաձեռնություններին, վերջինս ընդգծեց համագործակցության հարցում համայնքի պատրաստակամությունը: Նրա կարծիքով առավել կարևոր է, որպեսզի առանձնացվեն ծրագրային գործողությունների ոլորտները և յուրաքանչյուր ոլորտ կառավարվի իրավասու կազմակերպության/համայնքի կողմից:

Մասնակիցներն անդրադարձան նաև ֆինանսա-հարկային հարցերին: Հասմիկ Մելիքյանը նշեց, որ ցանկացած տարբերակի դեպքում կազմակերպությունը պետք է կգործի թափանցիկ և հաշվետու: Արմեն Ամիրադյանն առաջարկեց ծրագրերի շրջանակներում ստեղծել կայք, որտեղ կտեղադրվեն բոլոր գործողություններն ու դրանց ֆինանսական հաշվետվությունները, որով էլ կապահովվի ՍԶ-ների թափանցիկությունը և հաշվետվողականությունը:





EU4Youth

4.3. ՄՁ ֆինանսավորման վերաբերյալ ընդհանուր նկատառումներ (soft

փոխառություններ և այլն), ֆինանսական բաղադրիչներ:

Վարկավորման հատուկ ծրագրերով պետությունը, Կենտրոնական բանկը և ֆինանսական կազմակերպությունները համագործակցում են, աջակցելու համար տարբեր շահառու խմբերին (ուսանողներ, երիտասարդներ, գիտնականներ, զինվորներ, պետական ծառայողներ և այլ) մատչելի վրակեր ստանալու նպատակով:

Վարկավորման հատուկ ծրագրերը հիմնականում վերաբերում են հիփոթեքային վարկերին: Այդպիսի վարկերը տրամադրվում են անշարժ գույքը ձեռք բերելու, վերանորոգելու կամ կառուցապատելու նպատակով՝ գրավադրելով տվյալ անշարժ գույքը, իսկ հողամասի կառուցապատման դեպքում՝ նաև հողամասի կառուցապատման իրավունքը: Նպատակն է՝ ստեղծել այնպիսի պայմաններ, որոնց առկայությունը կնպաստի վարկերը վերադարձնելուն և տոկոսներ վճարելուն, պայմանով, որ ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերումը ֆինանսավորելու համար տրամադրվող դրամական միջոցները՝, հասանելի լինեն միջին և ցածր եկամուտ ունեցողներին, վերջիններիս կողմից իրենց բնակարանային պայմանները հիփոթեքային վարկավորման միջոցով բարելավելու համար:

Պետական աջակցության բաղադրիչ ունեցող հաջորդ կարևոր վարկատեսակներից են ուսումնական վարկերը, որոնց նպատակն է մատչելի վարկերի միջոցով աջակցել երիտասարդներին՝ ստանալու վճարովի հիմունքներով տրամադրվող բարձրագույն կրթություն: Մյուս վարկատեսակներն ուղղված են երիտասարդների առօրյա այլ խնդիրների լուծմանն աջակցելուն:





EU4Youth

Այսպիսի աջակցությունը հիմնականում դրսևորվում է ապրանքների, ծառայությունների կամ աշխատանքների ձեռքբերումը ֆինանսավորելու համար վարկը վերադարձնելու և տոկոսներ վճարելու պայմանով դրամական միջոցների տրամադրման տեսքով, և հիմնականում դա իրականացվում է տոկոսադրույքի սուբսիդավորման, կանխավճարի նվազեցման և ժամկետի երկարացման միջոցով: Այնուամենայնիվ, տարբեր ծրագրեր իրենց պայմաններն ունեն:

«Բնակարան երիտասարդներին» և «Ազգային հիփոթեքային ընկերություն» կազմակերպությունները իրականացնում են այդ վարկերի վերաֆինանսավորումը: Նրանք ոչ թե աշխատում են անմիջապես հաճախորդների հետ, այլ համագործակցում են բանկերի և վարկային կազմակերպությունների հետ՝ տրամադրելով նրանց ցածր տոկոսով երկարաժամկետ վարկեր:

Ազգային հիփոթեքային ընկերության նպատակն է՝ հիփոթեքային վարկերը դարձնել մատչելի բոլոր նրանց համար, ովքեր ունեն բնակարանային ֆոնդի բարելավման համար ֆինանսավորման կարիք:

«Բնակարան երիտասարդներին» ծրագրի առաքելությունն է՝ ապահովել վարկավորման նպաստավոր պայմաններ երիտասարդների համար՝ տրամադրելով բնակարանային ապահովվածության, կրթության և առօրյա այլ խնդիրների լուծմանն ուղղված՝ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկավորման հնարավորություններ:

Վերը նկարագրված բոլոր ծրագրերի իրականացման հիմքում ընկած է սոցիալական բաղադրիչը, և պետական աջակցությունը միտված է եղել գուտ այդ սոցիալական բաղադրիչը խթանելուն: Հաշվի առնելով այս ամենը, կարծում ենք, որ ՍԶ ոլորտի պետական աջակցության ծրագրերում արդեն իսկ առկա են աջակցության նախադեպային մեխանիզմներ, և վերը նշված գործող մոդելներն օգտագործելով որպես նախադեպ, հնարավոր կլինի տրամադրել պետական աջակցություն





EU4Youth

նաև ՄՁ ոլորտում ներգրավված կազմակերպություններին բիզնես և այլ վարկերի տրամադրման հարցում: Ինչ վերաբերում է ՄՁ-ների համար հատուկ վարկային և այլ պրոդուկտների մշակմանը, մեր գնահատմամբ, այստեղ լրացուցիչ աշխատանք տանելու կարիք չի առաջանա, քանի որ ՀՀ բանկային շուկան կայացած է, ինքնակարգավորվող է, և փորձը ցույց է տալիս, որ ելնելով պետության կողմից իրականացվող սոցիալական ծրագրերի ուղղություններից՝ բանկերը և վարկային կազմակերպությունները բավականին արագ են արձագանքում շուկայի ընթացիկ պահանջներին:

Սույն Ուսումնասիրությունն ամբողջական չէր լինի, եթե այն չանդրադառնար նաև միջազգային փորձին, մասնավորապես այնպիսի երկրների փորձին ինչպիսիք են՝ Վրաստանը, Ավստրալիան, Լեհաստանը, Լիտվան և Սլովենիան: Անհրաժեշտ է նշել, որ բոլոր այս թվարկված երկրներում ՄՁ-ների համար հատուկ սահմանված կազմակերպարավական ձև չկա:⁸

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ օրինակ՝ Լիտվայի օրենսդրությունը (Սոցիալական ձեռնարկությունների մասին օրենքը) սահմանում է ՄՁ-ն որպես միավոր, որը կենտրոնացած է նոր աշխատատեղերի ստեղծման վրա՝ խոցելի խմբերի/համայնքների անդամների համար: ՄՁ կարգավիճակ ձեռք բերելու համար կազմակերպության հիմնադիր փաստաթղթերում պետք է հստակ նշվի շահառուների աշխատանքի տեղավորման կամ նրանց սոցիալական ինտեգրման նպատակը, իսկ նշված կազմակերպությունները չպետք է գործեն ՄՁ-ների համար արգելված ոլորտներում:

Նման կարգավիճակ ունեցող ձեռնարկությունները (Work Integration Social Enterprise (WISE)) հնարավորություն ունեն ստանալ պետական ֆինանսավորում և այլ արտոնություններ, ներառյալ հարկային արտոնություններ:

⁸ Social Entrepreneurship in Georgia – Legislative Environment, Challenges and International Practice





EU4Youth

Ձեռնարկությունների մեկ այլ տեսակ՝ Համայնքային շահերի ընկերություն (CIC) ներկայացվել է Միացյալ Թագավորության կողմից 2004 թվականին՝ ի սկզբանե թույլ տալով բարեգործական կազմակերպություններին զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, սակայն ներկայումս այս տեսակն օգտագործվում է միայն ՍՁ-ների համար:⁹

CIC-ն ունի ավանդական ընկերությանը նման կառուցվածք, սակայն ենթարկվում է «ակտիվների արգելափակման» սկզբունքին, այսինքն՝ տվյալ տեսակի ընկերության համար սահմանված է ակտիվների սահմանափակում և շահաբաժինների բաշխման ստույգ սահմանված շեմ:¹⁰

Մասնավորապես, այս տեսակի կազմակերպություններում շահաբաժինների տեսքով կարող է բաշխվել շահույթի միայն 35%-ը: CIC կառուցվածքն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում սոցիալապես պատասխանատու վարկատուների կամ ներդրողների համար, քանի որ այս տեսակի կազմակերպություններում ներդրումներ կատարող սուբյեկտները օգտվում են համապատասխան հարկային արտոնություններից: Կանադայի մի շարք նահանգներ ունեն հատուկ նախատեսված իրավական ձև, որը կենտրոնանում է բիզնես գործունեության մեջ սոցիալական առաքելության ներդրման վրա՝ հիմնվելով CIC սկզբունքի վրա: Այս իրավական ձևը թույլ է տալիս սոցիալական առաքելությունը իրականացնել բիզնես գործունեության միջոցով¹¹, ուղղելով շահույթի ավելցուկը սոցիալական շահերի բավարարմանը և սահմանափակումներ դնելով շահաբաժինների և կապիտալի բաշխման վրա:

⁹ Doeringer, MF. Fostering Social Enterprise: a Historical and International Analysis. See. Source: <http://scholarship.law.duke.edu/cgi/viewcontent.cgi?article=1052&context=djcil>.

¹⁰ Desk Research on International Experience in State Support Mechanisms for Social Enterprise Development p. 110

¹¹ <http://www.fin.gov.bc.ca/prs/cccl/>





EU4Youth

5. Եզրափակիչ դրույթներ

Ամփոփելով ոլորտում առկա մարտահրավերները կարծում ենք, որ այն հանգամանքը, որ ՀՀ-ում ՍՁ խթանումը սկսել է միջազգային կազմակերպությունների ակտիվ աջակցությամբ, որի սկզբնական շահառուները հանդիսացել են ոչ առևտրային կազմակերպությունները, իր հերթին բերել է որոշակի համակարգային խնդիրների: Մասնավորապես.

- Ամենագլխավոր խնդիրը այն է, որ ոչ առևտրային կազմակերպությունների անձնակազմի հմտությունները չեն համապատասխանում ձեռնարկատիրական անհրաժեշտ մտածելակերպին (business thinking), որն էլ իր հերթին միշտ բերում է ձեռնարկատիրական գործունեության ձախողման,
- Ռեսուրսների պլանավորման, աշխատանքների կազմակերպման և արտադրական հզորությունների հաշվարկման մասով փորձի պակասը բերում է ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարման ոչ ճիշտ կազմակերպմանը,
- Շեշտադրելով ՍՁ սոցիալական բաղադրիչը դուրս է մղվում ձեռնարկատիրական կոմպոնենտը ինչն իր հերթին վնասում է կազմակերպության կայունությանը,
- սովորաբար ՍՁ-ները «գոյատևել» են, այսինքն, մեծամասամբ հաջողել են այնքան ժամանակ, քանի դեռ եղել է դոնորի աջակցությունը, սակայն դրամաշնորհային միջոցներից ֆինանսավորման դադարեցումից հետո ձեռնարկատիրական գործունեությունը աստիճանաբար նվազել է, դրամաշնորհային միջոցների ամբողջական սպառման արդյունքում մտնելով փակուղի:





EU4Youth

- Դրամաշնորհային միջոցներով աջակցությունն իր հերթին հանգեցրել է «մակաբույծի» մտածելակերպի ձևավորմանը, ձախողման դեպքերի մեծամասնությունը աջակցության ակնկալիքի արդյունք է,
- Դրամաշնորհային միջոցներով աջակցությունը, իր հերթին, բերել է տվյալ ոլորտում խտրականության դրսևորման և անառողջ մրցակցության ձևավորման, այդպիսով խաթարելով գոյություն ունեցող շուկայական հարաբերությունները և կանոնները:

Հաշվի առնելով նկարագրված համակարգային խնդիրները, կարծում ենք, որ այս փուլում ՀՀ-ում ՍՁ զարգացման տեսանկյունից անհրաժեշտ է որպեսզի.

- ՍՁ-ն այս փուլում պետք է առաջնահերթ դիտարկվի որպես կայացած ձեռնարկատիրություն, այնուհետև, կայունությունն ապահովելուց հետո, անհրաժեշտ է առավել մանրակրկիտ վերահսկողություն սահմանել սոցիալական բաղադրիչի և հաշվետվողականության վրա,
- Անհրաժեշտ է բավական տեղ հատկացնել իրազեկման աշխատանքներին, որպես դոնոր աջակցության մի մաս, այստեղ շատ մեծ օգնություն է հանդիսանում օրենքով սոցիալական գովազդների խրախուսումը, ինչի մասին արդեն ասվել է սույն փաստաթղթում:
- Դոնոր աջակցությունը մեծամասամբ պետք է ուղղվի ՍՁ անձնակազմի ձեռնարկատիրական գիտելիքների զարգացմանն ու կատարելագործմանը,
- Պետք է բացառել ցանկացած տեսակի խտրականության դրսևորում, որը կարող է խաթարել առողջ մրցակցությունը,
- Դոնորները իրենց գործողություններով չձևավորեն կայուն աջակցության ակնկալիք ՍՁ մոտ,





EU4Youth

- Պետական աջակցությունը պետք է լինի խիստ սահմանափակ, առավելագույն շեշտը դնելով համայնքային աջակցությանը՝ քննարկելով և մշակելով հնարավոր տարբերակներ:

Նկարագրված միջոցառումները և խորհուրդները, կարծում ենք բավարար են այս փուլում ՍՁ զարգացման համար արգելափակող գործոն հանդիսացող նշված հիմնական խոչընդոտները հաղթահարելու համար:

Ինչ վերաբերում է ՀՀ գործող օրենսդրական դաշտին և առկա կարգավորումներին, ելնելով դրանց ուսումնասիրությունից, հարկ ենք համարում նշել, որ այս պահին չկա ՍՁ-ների մասին առանձին օրենք ընդունելու կենսական անհրաժեշտություն, հատկապես, եթե դիտարկենք ՄԹ, Ավստրալիայի փորձը, որտեղ ՍՁ հաջողությամբ կայացել և զարգացել առանց հատուկ կարգավորման¹²: Եվ, միևնույն ժամանակ, չկա որևէ իրավական արգելք դրա ընդունման համար: Սակայն, կարծում ենք, որ առանձին օրենսդրական ակտի միջոցով ոլորտի կարգավորման ճանապարհին ընտրելուց առաջ, անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը. այն երկրներում, որտեղ ՍՁ-ն կայացել է որպես առանձին ինքնուրույն ձեռնարկատիրության տեսակ (Իսպանիա, Չեխիա, Սլովենիա, ԱՄՆ-ի որոշ նահանգներ¹³), ՍՁ գործունեության իրավական կարգավորումն իրականացվել է ՍՁ դաշտի քիչ թե շատ կայունանալուց հետո, այսինքն, երբ արդեն անցել էր որոշ ժամանակ, որը բավարար էր ոլորտի դրական և բացասական կողմերը գնահատելու, անհրաժեշտ բացերը հայտնաբերելու և համապատասխան կարգավորումները մշակելու համար: Ցանկալի է նկատի ունենալ նաև այն, որ այս փուլում առանձին օրենք ընդունելու տարբերակն ընտրելու դեպքում, բավականին երկար ժամանակ է պահանջվելու օրենքի նախագծի մշակման, հանրային քննարկումներ և լսումներ անցկացնելու, շահերի պաշտպանության և լրբինգի

¹² Social enterprises and their ecosystems in Europe - Comparative synthesis report; <https://ec.europa.eu/social/main.jsp?catId=738&langId=en&pubId=8274>

¹³ Social Entrepreneurship in Georgia – Legislative Environment, Challenges and International Practice





EU4Youth

իրականացման համար: Բացի այդ, այս պահին՝ ՄՁ-ների զարգացման փուլում, քանի դեռ հստակ չեն կարգավորման կարիքն ունեցող բացերն ու ռիսկերը, այս տարբերակի ընտրությունը կարող է հետաձգել ՄՁ-ների օրգանական զարգացման ընթացքը: Սակայն, կարծում ենք, որ առանձին օրենսդրության ստեղծումը կարող է լինել ծրագրի հեռահար նպատակը՝ Impact մակարդակում:

«EU4Youth - Սոցիալական Ձեռնարկատիրությունը Հայաստանում և Վրաստանում» ծրագիր

Սոցիալական Ձեռնարկատիրության մոդելի զարգացման իրավական դաշտի ձևավորման
հնարավորությունների ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ փաստաթղթի

Աղյուսակ Ա

ՀՀ-ում ամենատարածված կազմակերպչիրավական ձևերը, նկարագրությունը, մանրամասները

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	Բաժնետիրական ընկերություն	Հիմնադրամ	Անհատ ձեռնարկատեր կամ ԱՁ	Հասարակական կազմակերպություն
- մեկ կամ մի քանի անձանց	- մեկ կամ մի քանի անձանց	- քաղաքացիների և (կամ)	- ֆիզիկական անձ	- ֆիզիկական անձ և (կամ)





EU4Youth

<p>հիմնադրած ընկերություն;</p> <p>- մինչև 49 մասնակից</p> <p>- կանոնադրական կապիտալի նվազագույն չափ չկա</p>	<p>հիմնադրված ընկերություն</p> <p>- գրանցման բարդ ընթացակարգ</p> <p>- բաժնետերերի ռեեստրի վարման առանձին պահանջ</p> <p>- վերստուգիչ հանձնաժողովի պահանջ</p>	<p>իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող կազմակերպություն,</p> <p>- հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական կամ այլ հանրօգուտ նպատակներ</p>	<p>ինքնուրույն, իր անունից և իր ռիսկով իրականացնում է շահույթ (եկամուտ) ստանալուն ուղղված գործունեություն:</p>	<p>իրավաբանական անձանց հասարակական միավորում, ոչ առևտրային կազմակերպություն;</p>
<p>Կիրառելի բոլոր</p>	<p>Կիրառելի բոլոր</p>	<p>Ընդհանուր</p>	<p>Կիրառելի բոլոր</p>	<p>Ընդհանուր</p>





EU4Youth

<p>հարկման դաշտեր՝ կախված գործունեության տեսակից և շրջանառությունի ց:</p>	<p>հարկման դաշտեր՝ կախված գործունեության տեսակից և շրջանառությունի ց:</p>	<p>հարկման դաշտ</p>	<p>հարկման դաշտեր՝ կախված գործունեության տեսակից և շրջանառությունի ց:</p>	<p>հարկման դաշտ</p>
<p>Առավելություններ՝ - արագ գրանցում - փաստաթղթաշ րջանառության նկատմամբ նվազագույն պահանջներ - ցանկացած բնույթի շահույթ հետապնդող գործունեություն</p>	<p>Առավելություններ - կառավարման և հաշվետվողակ անության լայն հնարավորությո ւններ - ցանկացած բնույթի շահույթ հետապնդող գործունեությու ն</p>	<p>Առավելություններ - արագ գրանցում - կառավարման և հաշվետվողակ անության լայն հնարավորությո ւններ</p>	<p>Առավելություններ - արագ գրանցում - փաստաթղթաշ րջանառության նկատմամբ նվազագույն պահանջներ</p>	<p>Առավելություններ - արագ գրանցում - թեթև վարչարարությ ուն</p>





EU4Youth

<p>ն</p> <p>- առավել ճկուն</p> <p>ձև</p> <p>- Պարտականությունների և իրավունքների սահմանափակում՝ հիմնադիրների իրավունքների և պարտականությունների նկատմամբ:</p>				
<p>Թերությունները՝</p> <p>- մասնակիցների փոփոխության դեպքում պարտադիր</p>	<p>Թերություններ՝</p> <p>- բարդ փաստաթղթաշրջանառություն և բաժնետերերի</p>	<p>Թերություններ՝</p> <p>- ձեռնարկատիրական գործունեությունը խիստ</p>	<p>Թերություններ՝</p> <p>- պատասխանատվության լայն շրջանակ, սեփական</p>	<p>Թերություններ՝</p> <p>- իրականացվող ձեռնարկատիրական գործունեություն</p>





EU4Youth

գրանցում պետոեգիստրում մ - Կապիտալի փոփոխության դեպքում պարտադիր գրանցում պետոեգիստրում մ	ռեեստրի վարման պահանջ - պարտավոր չէ ձեռքբերել հիմնադրի բաժնեմասը այն դեպքում, երբ հիմնադիրը ցանկանում է դուրս գալ բիզնեսից:	սահմանափակ է - առանձնացվա ծ հաշվետվություն ւնների վարման պահանջ	գույքով, - հնարավոր չէ բիզնեսը վարել մի քանի մասնակիցներ ով` :	ներ չպետք է հակասի կազմակերպու թան կանոնադրությ անը - առանձնացվա ծ հաշվետվություն ւնների վարման պահանջ
--	--	--	---	---

Աղյուսակ Բ

ՀՀ-ում կիրառելի հարկման համակարգերը ձևերը, նկարագրությունը և մանրամասները

ՀՀ-ում գործում են հարկման ընդհանուր և հատուկ համակարգեր: Հարկման ընդհանուր համակարգի շրջանակներում կազմակերպությունները, ԱԶ-երը և նոտարները հարկվում են մասնավորապես ԱԱՀ-ով և (կամ) շահութահարկով:





EU4Youth

Հարկման հատուկ համակարգեր՝


1) միկրոձեռնարկատիրության համակարգի շրջանակներում կազմակերպությունները և ֆիզիկական անձինք հիմնական դեպքերում ազատվում են մասնավորապես ԱԱՀ-ով և (կամ) շահութահարկով, ինչպես նաև շրջանառության հարկով հարկումից

2) շրջանառության հարկի համակարգի շրջանակներում կազմակերպությունները հարկվում են ԱԱՀ-ին և (կամ) շահութահարկին փոխարինող շրջանառության հարկով, իսկ անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ շահութահարկով և ԱԱՀ-ին փոխարինող շրջանառության հարկով.

:

Հարկման հատուկ համակարգերում գործող կազմակերպությունների, ԱԶ-երի և նոտարների համար հատուկ համակարգերին վերաբերող այլ հարկերը և վճարները (որոնց շրջանառության հարկը չի փոխարինում, կամ որոնցից միկրոձեռնարկատիրության սուբյեկտները չեն ազատվում) հաշվարկվում ու վճարվում են սահմանված կարգով:


ՀՀ-ում այս պահին գործող հարկման համակարգերը սխեմատիկ կարելի է պատկերել այսպես .





EU4Youth

Օրենքով ընձեռնված հարկման համակարգերի շրջանակներում միկրոձեռնարկատիրության հնարավորությունը համեմատաբար նոր է և սահմանում է հարկման բավական արտոնյալ շրջանակ, որն ունի հետևյալ սխեմատիկ տեսքը.



Հակիրճ անդրադառնանք համակարգերից յուրաքանչյուրին, նկարագրելով դրանց առանձնահատկությունները:

1. Միկրոձեռնարկատիրության համակարգ

- Այս համակարգում գործող տնտեսվարողները ազատված են բոլոր պետական հարկերի հաշվարկման և պետական բյուջե վճարման պարտավորությունից և որպես հարկային գործակալ՝ հարկը հաշվարկելու, պահելու և պետական բյուջե փոխանցելու պարտավորությունից:





EU4Youth

- Միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողների համար վճարվող (հաշվարկվող) եկամուտներից յուրաքանչյուր վարձու աշխատողի համար ենթակա է վճարման ամսական 5000 ՀՀ դրամ եկամտային հարկ:
- Համակարգի հնարավորություններից օգտվելու համար անհրաժեշտ է ներկայացնել Հայտարարություն միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ.

Այս համակարգում կարող են գործել՝

- Անհատ ձեռնարկատերերը;
- ԱԶ կամ նոտար չգրանցված ֆիզիկական անձինք (տ՛ես հավելված 3-ում սահմանված ցանկը)
- Առևտրային կազմակերպությունները:
- մինչև պետական գրանցման կամ հաշվառման հաջորդող 20-րդ օրը,
- նախորդ տարիներին արդեն գրանցված/հաշվառված լինելու դեպքում՝ մինչև հաշվետու տարվա փետրվարի 20-ը:

Միկրոձեռնարկատիրության սուբյեկտները մինչև հաջորդող տարվա փետրվարի 01-ը **ներկայացնում են** նախորդ տարվա ընթացքում գործունեության վերաբերյալ **տարեկան հաշվետվություն:**

Համակարգում գործելու համար առկա են նաև այլ սահմանափակումներ, որոնք ներկայացված են ՀՕ 267 հ. 5-րդ մասում:

2. Շրջանառության հարկ

- Կիրառվում է մինչև 115 մլն շրջանառություն ունեցող բազայի նկատմամբ, ունի գործունեության սահմանափակումներ,





EU4Youth

- Հարկը հաշվարկվում է շրջանառությունից և ոչ թե շահույթից,
- Հաշվապահական հաշվառում չի պահանջվում,
- Հաշվետվությունները՝ եռամսյակային, ԱԶ-ի դեպքում՝ նաև տարեկան,
- Հարկման դրույքաչափը միջինում 5% (կիրառման ենթակա այլ դրույքաչափերի սանդղակը սահմանված է ՀՕ 258 հ.);
- Այս համակարգում գործող տնտեսվարողները ազատված չեն գործակալի պարտականություններից եկամտային հարկի և շահութահարկի մասով,
- Համակարգի հնարավորություններից օգտվելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր տարի ներկայացնել հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ;
- Այս համակարգում գործող ԱԶ-ն վճարում է ամսական 5,000 ՀՀ դրամ շահութահարկ և 5,000 ՀՀ դրամ սոցվճար որպես ձեռնարկատիրական հարկ և վճար,
- Այս համակարգը կիրառելի է միայն առևտրային ընկերությունների նկատմամբ:

Այս համակարգում գործելու համար առկա են նաև այլ սահմանափակումներ, որոնք ներկայացված են ՀՕ 254-րդ հ. 3-րդ մասում:

3. ԱԱՀ և շահութահարկ

- Կիրառվում է 115 մլն. ավելի շրջանառություն ունեցող բազայի նկատմամբ, և ունի գործունեության առանձնահատկություններ;
- ԱԱՀ-ն հաշվարկվում է շրջանառությունից, շահութահարկը՝ շահույթից;
- Հաշվապահական հաշվառում պահանջվում է;





EU4Youth

- Ներկայացվող հաշվետվությունների տեսակներ՝ ԱԱՀ-ի ամսական, շահութահարկի տարեկան հաշվետվություններ;
- ԱԱՀ հարկման դրույքաչափը 20% շահութահարկի հարկման դրույքաչափը՝ 18% ի;
- Այս համակարգում գործող տնտեսվարողները ազատված չեն գործակալի պարտականություններից՝ բոլոր հարկերի մասով (այդ թվում՝ ոչ ռեզիդենտի բոլոր հարկերի);
- Համակարգի հնարավորություններից օգտվելու համար անհրաժեշտ է ներկայացնել Հայտարարություն ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ, որոշ դեպքերում նաև հաշվանցման իրավունք ձեռք բերելու համար;
- Այս համակարգում գործող ոչ առևտրային կազմակերպությունների համար սահմանված է արտոնություն միայն ԱԱՀ-ի մասով՝ մինչև 115մլն. շեմը (այսինքն չեն համարվում ԱԱՀ վճարողներ);
- ԱԱՀ-ն անուղղակի հարկ է, շահութահարկը՝ ուղղակի:

4. Ակցիզային հարկ, այլ հարկատեսակներ

Ակցիզային հարկ հաշվարկվում է միայն ենթակցիզային ապրանքների համար՝ ֆիզիկական ծավալներից ելնելով (ոչ թե դրույքաչափով): Ակցիզային հարկի դրույքաչափերը սահմանված են ՀՕ 88-րդ հ.:

Գործունեության երկու տեսակների համար, որոնցից են՝

ա. միջմարզային, ներմարզային և ներքաղաքային երթուղու շահագործման կամ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրումների կազմակերպում,

և





EU4Youth

բ. մետաղադրամով և (կամ) թղթադրամով շահագործվող ավտոմատների միջոցով սննդի առևտրի, ինչպես նաև մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի (բացառությամբ շահումով խաղերի և խաղատների գործունեության) կազմակերպում) նկատմամբ վերը նշված հարկման համակարգերը կիրառելի չեն: Դրանց փոխարեն գանձվում է պետական տուրք՝ Պետական տուրքի մասին ՀՀ օրենքին համապատասխան դրույքաչափերով (19.7-րդ և 19.8-րդ հոդվածներ):

Հարկերի և պարտադիր վճարների մնացած մասը (բնապահպանական հարկը, ճանապարհային հարկ, անշարժ գույքի հարկ, գույքահարկ, բնօգտագործման վճար, սոցիալական վճար, տեղական վճար և այլն) կախված չեն իրավակազմակերպական տեսակից և հարկման ռեժիմից, այլ հաշվարկվում են կոնկրետ գործարքի հիման վրա:

